

## ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՍՅԵՆԱՐՆԵՐ Գագիկ Տեր-Դարությունյան

Արդի տնտեսական ճգնաժամը, ըստ տարբեր նախանշանների եւ պետական գործիչների լավատեսական հայտարարությունների, կարծես թե հասել է «հատակին», եւ զլորակ տնտեսությունը վերականգնման միտումներ է ցուցաբերում: Միեւնույն ժամանակ, համաձայն ամենատարբեր կողմնորոշումներ ունեցող փորձագիտական կենտրոնների, տնտեսական անվտանգության արդի զլորակ համակարգը շարունակում է մնալ ավելի քան անկայուն եւ խոցելի: Այդ իսկ պատճառով վերլուծաբանների մի զգալի մասը համոզված է, որ ստեղծված իրավիճակում հնարավոր են ֆինանսական-աշխարհատնտեսական զարգացումներ, որոնք կարող են էապես փոխել վերջին տասնամյակներում արդեն կարծրացած աշխարհաքաղաքական պատկերացումների ողջ համալիրը:

Դատկանշական է, որ դեռ վերջերս հորեւտեսական կանխատեսումներում գլխավորապես դիտարկվում էին միջուկային գենքի անվերահսկելի տարածումը (որն արդեն իրողություն է դարձել) եւ հնարավոր միջուկային հակամարտությունների աղետալի հետեւանքները (օրինակ՝ Դնդկաստանի եւ Պակիստանի միջեւ): Մինչդեռ այսօր տեղեկատվական դաշտում սկսել են գերակայել զլորակ ֆինանսական-տնտեսական համակարգի փլուզման եւ դրա, երբեմն ոչ պակաս աղետալի, հետեւանքների վերաբերյալ սցենարների քննարկումները:

Նկատենք, որ նման սցենարների ստեղծումը եւ հետագա քննարկումները (որոնք կարելի է ընդունել որպես այդ սցենարների յուրահատուկ «զարգացման» փուլ) քաղաքական մշակույթի կարեւոր բաղադրամասերից են եւ այսօր հիմնավորված քաղաքական-տնտեսական պլանավորումը դժվար է պատկերացնել առանց սցենարային տեխնոլոգիաների օգտագործման:

**Սցենարային պլանավորում.** Դամարվում է, որ այս մեթոդի տեսական հիմունքները մշակվել են նախորդ դարի 60-ականներին, իսկ առաջին կիրառական նշանակության սցենարային պլանավորումը իրագործել են 1971թ. Royal Dutch Shell նավթային ընկերության վերլուծաբանները. նրանք այդպիսով փորձում էին հաշվարկել այդ տարիներին խիստ հրատապ դարձած՝ ՕՊԵԿ-ի կողմից նավթի գների բարձրացման հնարավոր

տարբերակները եւ կանխատեսել դրանց հետեւանքերը: Պետք է ընդգծել, որ սցենարային մշակումները պարունակում են փորձագիտական կանխատեսումներ կատարելու բազմաթիվ տարրեր: Միեւնույն ժամանակ, սցենարային պլանավորումն ուղղված չէ ապագայի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձեւավորմանը: Այն գլխավորապես թույլ է տալիս ենթադրել, թե այս կամ այն իրադրությունում (որը կարող է պատահել ապագայում կամ էլ առկա է արդեն այսօր) ինչպիսի քաղաքական, տնտեսական եւ այլ բնույթի զարգացումներ կարող են ընթանալ թե ինչպիսի հետեւանքներ կունենան այդ գործընթացները:

Սցենարային մտածելակերպը թույլ է տալիս ավելի ազատորեն ուրվագծել լոկալ կամ գլոբալ զարգացումների հնարավոր, երբեմն իրարաներժ եւ ծայրահեղ թվացող տարբերակները: Դատկանշական է, որ սցենարային պլանավորում կատարելիս խիստ արժեւորվում է փորձագետների երեւակայությունը, եւ պատահական չէ, որ նման մշակումներին հաճախ ներգրավում են ոչ միայն տվյալ խնդրի նեղ մասնագետներին, այլև ֆանտաստ գրողներին, շախմատիստներին եւ այլ, այսպես կոչված, ստեղծագործ-«կրեատիվ» անհատականություններին: Նման «ազատ» մոտեցումը հնարավոր զարգացումների նկատմամբ, ի թիվս այլ առավելությունների, թույլ է տալիս նախապես պատրաստվել ամենաանսպասելի ռազմաքաղաքական շրջադարձներին: Նշված հանգամանքների շնորհիվ «սցենարային տեխնոլոգիաները» մեծ տարածում են գտել ոչ միայն պետական կառույցներում կամ դրանց հովանավորությամբ գործող «ուղեղային կենտրոններում», այլև խոշոր կոմերցիալ ընկերություններում:

Գոյություն ունեն սցենարային մշակումների տարրեր մեթոդներ, սակայն, որպես կանոն, դրանք ենթադրում են հետեւյալ անհրաժեշտ քայլերը:

1. Հնարավորինս հստակեցվում է իրադրության զարգացման ընդհանուր ֆոնը, եւ այդ ենթատեքստում առանձնացվում են այն իրադրությունները, որոնք իրագործվելու մեջ հավանականություն ունեն:

2. Որոշվում են այն գործոնները եւ պարամետրերը, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն տվյալ իրադրության զարգացման վրա:

3. Հնարավորության սահմաններում որոշվում են վերոնշյալ գործոնների եւ պարամետրերի ծայրագույն նշանակությունները կամ, այլ խոսքերով, դրանց հնարավորինս մեծ, եւ հակառակ՝ փոքր, ներգործման չափերը:

4. Հիշատակված պարամետրերի եւ գործոնների որոշակի տրամաբանական համադրումների արդյունքում ձեւավորվում են այն հնարավոր սցենարները, որոնց իրագործման հավանականությունը գնահատվում է առավել բարձր կամ, նվազագույնս, տեսականորեն չի բացառվում:

**Դոլարի արժեզրկման հետ կապված սցենարներ.** Սցենարային պլանավորումը նախկինում արեւմտյան փորձագետների մեջաշնորհն էր, մինչդեռ ներկայումս կարելի է հանդիպել նաև այլ, օրինակ՝ ռուսաստանյան հետազոտությունների: Մասնավորապես, մասնագիտական շրջանակ-ներում լուրջ հետաքրքրություն է առաջացրել Դ.Մոտորինի եւ համահեղինակների վերջերս հրապարակած աշխատությունը, որտեղ ներկայացված են դոլարի արժեզրկման հնարավոր մեխանիզմներին եւ հետեւանքներին նվիրված սցենարներ: Դրանք համարվում են բավական իրատեսական եւ ներկայումս լայնորեն քննարկվում են այլ, այդ թվում՝ ամերիկյան, վերլուծաբանների կողմից: Հաճաշխարհային հիմնական արժույթի արժեզրկման վերաբերյալ հիմնադրութիւններում, մասնավորապես, դրված են հետեւյալ թեզերը.

❖ դա չի հակասում տնտեսական կամ հասարակական զարգացման որեւէ օրինաչափության,

❖ այդ բնույթի գործընթացները, ինչպես ցույց են տալիս հատկապես վերջին ճգնաժամին նվիրված բազմաթիվ վերլուծությունները, մեծ հավանականությամբ նախապես պլանավորվում եւ իրագործվում են ուժի որոշակի կենտրոնների կողմից:

**Pax Americana – 2, Կողի Ամերիկա եւ «Զիմերիա»** Այս անունները կրող սցենարներից առաջինը այն տարբերակն է, երբ ԱՄՆ-ը, ելնելով որոշակի հանգամանքներից, ինքն է հարուցում դոլարի արժեզրկումը:

Ինչպես հայտնի է, այսօր գլոբալ տնտեսության գրեթե բոլոր դերակատարներն իրենց արտաքութային ակտիվները պահում են դոլարով կամ ԱՄՆ զանձարանի փոխառություններով (այսպես կոչված UST): Բնական է, որ այդ դերակատարները շահագրգիռ են, որպեսզի համաշխարհային տնտեսական համակարգի հենք հանդիսացող դոլարը չփոխանակվի: Օգտագործելով այս իրողությունը՝ ԱՄՆ-ը տեղեկատվական եւ ֆինանսական որոշակի մանիպուլյացիաների միջոցով հրահրում է, որպեսզի բոլորը սկսեն տեղագին դոլար եւ UST գնել, որպեսզի այդպիսով պահպանեն առկա ֆինանսական համակարգը: Բավարարելու համար իր կողմից ձեւավորված պահանջարկը՝ ԱՄՆ-ը «ստիպված» սկսում է հսկայական քանակությամբ դոլարներ տպել, ինչն էլ արժեզրկում է այդ արժույթը մի քանի անգամ՝ էապես նվազեցնելով ԱՄՆ արտաքին պարտքերը եւ միաժամանակ սնանկացնելով միջազգային ֆինանսական հանրության բոլոր մասնակիցներին: Դրան զուգահեռ ԱՄՆ-ը, դեկավարելով այդ ողջ գործընթացը, տիրապետելով իրադրությանը եւ դոլարային հաստոցին, հասցնում է էժան գներով ձեռք բերել կարեւորագույն արտադրական ակտիվները ողջ աշխարհում: Գործողությունների այդ համալիրի արդյունքում ԱՄՆ-ը

Վերականգնում է իր գլոբալ մենատիրությունը եւ այդպիսով վերահաստատում միաբեներ աշխարհակարգը. սկսվում է երկրորդ ամերիկյան աշխարհի (Pax Americana – 2) դարաշրջանը:

Վերոնշյալ սցենարի մեկ այլ ճյուղավորումում սեփական մտադրություններն իրագործելիս ամերիկացիները հանդիպում են այլ տերությունների (հատկապես՝ Չինաստանի եւ Եվրոպայի) լուրջ դիմադրությանը եւ չեն կարողանում լիովին իրագործել իրենց մտահղացումը՝ մասնավորապես ակտիվներ գնել արտերկրում: Որպես հետեւանք՝ ԱՄՆ-ը մասամբ կլուծի միայն իր ներքին խնդիրները եւ կվերածվի զարգացած ու փոքր-ինչ մեկուսացած պետության, սակայն առանց գերտերության հավակնությունների (Կողմից Ամերիկա սցենարը):

Դետաքրքիր է այն տարրերակը, երբ այսպես կոչված «դոլարային փոշեկուլը» համատեղ միացնում են ԱՄՆ-ը եւ Չինաստանը: Նման պարագայում «արժեզրկում» գործողությունը հաջողությամբ է պասակվում: Յիշենք, որ Պեկինի եւ Վաշինգտոնի կողմից աշխարհի համատեղ «դեկավարման»՝ այսպես կոչված «Չիմերիայի» (China եւ America բառակապակցությունից) վերաբերյալ սցենարների քննարկումներն աշխուժացան այս տարվա հունվարից, երբ Զբիգնեւ Բժեզինսկին Պեկինում կոչ արեց ԱՄՆ-ին եւ ՉՃ-ին՝ միասին լուծել գլոբալ հիմնախնդիրները: Նշենք, որ զարգացման նման միտումը առաջնահերթ սպառնալիք է Ռուսաստանի համար, եւ պատահական չէ, որ «Չիմերիայի» սցենարային ճյուղավորումներում դիտարկվում է, մասնավորապես, Չինաստանի կողմից Ռուսաստանի օգտակար հանածոներով եւ այլ ռեսուրսներով հարուստ սիրիյան եւ հեռավորարենեյան տարածքների օկուպացիան:

**«Չիռուսիա» եւ Good-bye, America.** Թերեւս, վերոնշյալ հանգամանքն է, որ թելադրում է Ռուսաստանի դեկավարությանը ընդհանուր եւ հաճախ հակաամերիկյան բնույթի ընդհանրություններ փնտրել ՉՃ-ի հետ իր հարաբերություններում: Աշխարհաքաղաքական տեսանկյունից երկու տերություններին էլ հատկապես անհանգստացնում է ԱՄՆ դիրքերի անրապանդումը Կենտրոնական Ասիայում, եւ այդ անհանգստության նյութականացված արտահայտությունը կարելի է համարել ՇՀԿ-ի ստեղծումը: Ելնելով այդ իրողություններից՝ փորձագիտական հանրությունում այսօր դիտարկվում է նաև այդ տերությունների մերձեցումը, ինչը որոշ մեկնաբաններ անվանում են Արջի եւ Վիշապի միություն: Այդ միությունը, ինչ-որ չափով նմանեցնելով Չիմերիա հաջող արտահայտությանը, մենք կանվանեմք, օրինակ, Չիռուսիա:

Արդի «սցենարիստները» հնարավոր են գտնում, որ ՉՃ-ն եւ ՌԴ-ն, կատարելով համապատասխան նախապատրաստական աշխատանքներ

Եւ կանխելով ամերիկյան գործողությունները ֆինանսական շուկայում, կտրուկ սկսում են շուկա նետել իրենց կուտակած UST-ները՝ գործահեռաբար «միացնելով» դոլարային «փոշեկուլը»: Համաձայն սցենարային ճյուղավորումների, ԱՄՆ պատասխանը կարող է արտահայտվել ռազմական գործողությունների տեսքով, որին, սակայն, դաշնակիցները նախապատրաստվել էին: Նոր աշխարհակարգում տիրում են ամենամեծ մարդկային-տնտեսական (ՉԺՀ) եւ տարածքային-նյութական (ՈԴ) ռեսուրսների տիրապետող տերությունները:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը կարող է կորցնել գլոբալ առաջատարությունը ոչ միայն Չիռուսիայի գործողությունների շնորհիվ: Մի շարք սցենարներում (որոնք, ի դեպ, դիտարկվում են նվազագույնը արդեն 2000 թվականից) այդ գերտերության ինքնափլուզման տարրերակը կիրատապանա հատկապես այն դեպքում, եթե ԱՄՆ-ը չկարողանա կանխել ներկայիս համակարգային բնույթ կրող տնտեսական անկման գործընթացները եւ դրանք անկառավարելի դառնան: Օրինակ, պետական պարտքի աճման (մինչեւ \$17 տրիլիոն) հետ կապված՝ սկսվում են հիպերինֆլյացիա, սնանկացումներ եւ այլն: Արդյունքում՝ երկրում սկսվում են զանգվածային խլրտումներ եւ բախումներ, քառտիկ իրավիճակի պատճառով բնակչությունը խուճապահար փախչում է երկրից եւ այլն: Ինչ-որ տեղ ԽՍՀՄ փլուզումը հիշեցնող այդ սցենարը ստացել է Good-bye, America անվանումը:

**ՈՒՇԱԳՐԱՎ ՓԱՍՏԵՐ  
ԹՈՒՐՖԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՈՒՐՔԵՆ ՄԵԼՔՐՈՆՅԱՆ**

Թուրքիայում մնացած հայության բեկորների (թե՛ իսլամացված եւ թե՛ քրիստոնյա) թեման, տարբեր պատճառներով, մեզանում քիչ է ուսումնասիրված եւ լուսաբանված: Հատկապես նրանց ներկայիս դրության մասին ուսումնասիրություններ սակավ են հանդիպում: Թուրքիայի տարբեր գավառներում ապրող ուժացած կամ ծպտյալ հայերի խնդիրը, խոշոր առունով, փակ էր եւ անհայտ ոչ միայն գիտական շրջանակների, այլեւ, օրինակ, պոլսահայերի համար, եւ ներկայումս տեղի ունեցող տարբեր գործիքացների արդյունքում հենց իրենք՝ պոլսահայերն են իրենց համար բացահայտումներ անում: Դրան տանող ճանապարհներից է, օրինակ, այն, որ ստամբուլյան հայկական դպրոցներում ուսանելու են գալիս գավառներում մնացած եւ ուժացման տարբեր աստիճանների վրա գտնվող հայերի երեխաներ: Ինչպես փոխանցում են խնդրին լավատեղյակ մարդիկ, գավառահայերը նախանձախնդիր են իրենց երեխաներին հատկապես հայկական դպրոցներ ընդունելու հարցում: Մայրենին եւ այդ միջոցով ակունքների հանդեպ հետաքրքրությունը ուշագրավ է հատկապես այսօրվա պոլսահայ համայնքի կրթական վիճակի համատեքստում, երբ օրեցօր պակասում է հայկական դպրոցների աշակերտների թիվը:

Վերջերս Ղերսիմում տեղի է ունեցել «Մնանական 9-րդ փառատոնը», որին մասնակցել են երգի, պարի խմբեր: Այս փառատոնի մասին իր տպավորությունները գրի առաջ «Ակոս» թերթի աշխատակից, պոլսահայ Բագրատ Էսդուգյանը, խոսելով Ղերսիմի հայկական ներկայության մասին, ուշագրավ փաստեր է փոխանցում, որոնք հաստատում են, որ կրոնափոխ եւ ծպտյալ հայերի խնդրի տարբեր շերտեր դեռեւս անհայտ են, եւ, բացի այդ, Թուրքիայի հայությունը խնդրի ունի ինքնաճանաշման հարցում եւս. «Արդէն իսկ հարազատութիւն կը զգայի քաղաքի ժողովուրդին նկատմամբ: Նախապէս կարդացածներն ագտէի, որ բաւական շատ էին իր նախնիներուն մէջ հայկական ծագում ունեցողները: Բայց այդ համեմատութիւնը երբեք չէի կարծեր, որ այսքան բարձր կըլլայ: ...Այլ զարմանալի երեւյթ մըն ալ այն է, որ ոչ ոք կը փորձէ ինքնութիւնը բարցնել: Ժողովուրդը համակերպած է Ալեւի կրօնքին, Քիւրտ քաղաքական շարժումներուն եւ Հայ ինքնութեան ամբողջականութեամբ ներկայանալու:

Մեզ՝ պոլսահայերուս համար, անհասկանալի այս համադրութիւնը իբրեւ քնական երեւոյթ տեղ գտած է Տերսիմի ժողովուրդին մօտ: ...Անատոլու տարածքին կարելի է հանդիպիլ հայու բեկորներու: Իսկ Դերսիմի մէջ կարելի է հանդիպիլ հայերու: Ոչ թաքուն, ոչ ծպտուած, ոչ ալ ազգուրաց, այլ՝ պարզապէս ուրոյն, իւրայատուկ»:

Ակիզբ առած եւ շարունակվող գործընթացը նորանոր փակ էջեր է բացում Յայոց մնացորդաց պատմության մեջ, որոնց հավաքումը եւ համակարգումը թույլ կտա փոքր-ինչ ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ: Սակայն այդ ամենը պահանջում է նաեւ ժամանակ, հմտություններ եւ ապացուցում այն անձանց տեսակետների սնանկությունը, որոնք շտապում են ժամանակից շուտ եւ անհիմն կամ, լավագույն դեպքում, մեկ-երկու հնացած փաստարկների վրա վերլուծություններ ու եզրակացություններ անել:

Նման փակ կամ չլուսաբանված էջերից է արդեն հանրապետական Թուրքիայում հայերի բռնի իսլամացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Այդ քաղաքականության մասին առանձին դրվագներ երթեմն սպրդել են մամուլի էջերում, սակայն մենք կցանկանայինք առավելապես կոնկրետացնելով աշխարհագրությունը՝ ներկայացնել Սասունում անցյալ դարի կեսերին հայերի բեկորների հանդեպ կիրառված իսլամացման քաղաքականության որոշ տարրեր: Ավելորդ չենք համարում նշել, որ այդ մասին փաստերը մենք անձանք ենք գրի առել հենց տեղում իրականացրած դաշտային-հետազոտական աշխատանքների եւ մարդկանց հետ զրույցների արդյունքում: Սակայն, մինչեւ կոնկրետ խնդրին անդրադառնալը, հարկ է գոնե ընդհանուր գծերով ներկայացնել Թուրքիայի Յանրապետությունում հայերի հանդեպ կիրառված հալածանքի, բռնության քաղաքականության առանձին դրսեւորումներ:

Յայտնի է, որ Թուրքիայի Յանրապետության գոյության առաջին տասնամյակներին որոշ թվով հայեր մնացել էին այդ երկրի արեւելյան շրջաններում եւ Ստամբուլում (ըստ տարրեր աղբյուրների՝ 250-300 հազար): Փաստերը ցույց են տալիս, որ հատկապես արեւելյան շրջաններում, այն է՝ պատմական Յայաստանի տարածքում մնացած հայերի նկատմամբ արդեն հանրապետական Թուրքիայի դեկավարությունը իրականացնում էր պետական քաղաքականություն, որը շատ հաճախ չէր տարբերվում Օսմանյան կայսրության տարիներին իրականացրածից եւ պարունակում էր տեղահանության, աքսորի, բռնի իսլամացման դրսեւորումներ: Օրինակ, 1929թ. ամռանը եւ դրան հաջորդող ամիսներին մոտ 30 000 հայ է աքսորվել Խարբերդի, Դիարբեքիրի եւ Մարդինի նահանգներից: Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Սքիների՝ 1934թ. մարտի 2-ին ԱՄՆ

արտաքին գործոց նախարարին ուղարկված գեկուցագրում, որը պահվել է հույժ գաղտնի դասիչի տակ, ներկայացվում են տվյալներ այդ թվականներին Թուրքիայի արեւելյան շրջաններից հայերի տեղահանության մասին: Այսպես, նշվում է, որ 1934թ. սկզբներին թուրքական իշխանությունները սկսել են «Անատոլիայից» հայերին տեղահանել եւ ուղարկել Ստամբուլ: Այդ հայերը ստիպված են եղել շատ էժան վաճառել իրենց ունեցվածքը, որը դեսպանը համարում է ունեցվածքը լրելուն նույնական, եւ գնալ Ստամբուլ, որտեղ Յայոց պատրիարքարանը, բարեգործական տարբեր ընկերություններ աշխատել են օգնել նրանց: Յայերի տեղահանության իրական պատճառ է համարվում այն, որ նրանք հաջողակ գործարարներ են, ունեն լավ աշխատանք եւ կարողանում են գումար վաստակել, ինչն առաջացնում է թուրքերի խանդը: Սակայն ավելի կարեւոր եւ հիմնական պատճառ է դիտվում այն, որ այդ ամենն իրականում «Անատոլիան» լրիվ թուրքացնելու քաղաքականության մի մասն է: Այս ամենի վրա լույս է սփյուռ արդեն 1940-ականների սկզբին իշխող ժողովրդահանրապետական կուսակցության 9-րդ բյուրոյի (որը պատասխանատու էր փոքրամասնությունների հարցերով) պատրաստած մի գեկույցը, որտեղ պարզորոշ երեւում է պետական ապարատի վերաբերմունքը ոչ մուսուլմանների նկատմամբ: Զեկույցում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետեւյալ տեսակետները. «Յայերն Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի եւ քաղաքական ինչ-որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Յայերին նախ եւ առաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարավոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաեւ բնակչության աճը»: Զեկույցում, հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղափոխելու համար մի հիմնավորում եւս. «Այս եղանակով եւ նրանց թվաքանակի աճը կլանիսվի, եւ վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքական ծեւով կլինեն պետության աչքի առաջ եւ ձեռքի տակ»:

Այսպիսով, տեսմում ենք, որ պետական քաղաքականությունը միտքած է եղել պատմական Յայաստանի տարածքում մնացած հայերի հեռացման այդ վայրերից, քանի որ բնօրրանում ապրող հայը պոտենցիալ վտանգ է ներկայացրել թուրքական պետությանը: Այս քաղաքականությունը գործել է համալիր: Դրա քաղկացուցիչ մասերից է եղել նաեւ պատմական Յայաստանի տարածքում մնացած հայերի բռնի իսլամացումը, սակայն այս ուղղությամբ գործադրվել են տարաբնույթ միջոցներ:

Նշենք, որ Սասունի վերապրած հայերի մասին տարբեր աղբյուրներում հանդիպում են կցկտուր տվյալներ, որոնք վկայում են, որ Սասունում

կան Յայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայեր, որոնց մի մասը ծպտյալ քրիստոնյաներ են: Սակայն կան նաև փաստեր, որոնք վկայում են, որ Սասունում պահպանվել են բացահայտ քրիստոնեադավան հայեր եւս, ու տարբեր են եղել նրանց փրկության ուղիները: Յայտնի է, որ Յայոց ցեղասպանությանը զուգորդել է նաև հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը (մշակութային ցեղասպանություն) եւ 1915-ից հետո պատմական Յայաստանի տարածքի կիսավեր կամ ամբողջովին ոչնչացված եկեղեցիներում ու վանքերում անհնար է եղել հայ հոգեւորականների ներկայությունը: Այս պայմաններում Սասունի վերապրած քրիստոնյա հայերը կրոնական ծեսերի կատարման հարցում բախվել են լուրջ խոչընդոտների: Սակայն հայ հոգեւորականի բացակայության պարագայում անգամ սասունցիների շրջանում մինչեւ մեր օրերն են հասել քրիստոնեության մի շարք տարրեր, որոնք տարատեսակ դժվարություններով կարողացել են փոխանցել սերունդներին: Դրա ամենացայտուն վկայությունն են ամեն տարի հուլիսին դեպի Մարութա սարի Սուլը Աստվածածին վաճիքի ավերակները կազմակերպվող ուխտագնացությունը, մոմավառությունը, մատադի արարողությունը եւ այլն: Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե ցեղասպանությանը հաջորդած տարիներին քրիստոնեությունը պահպանած սասունցիներին հայ հոգեւորականով չապահովելը միայն Յայոց պատրիարքության «անտարբերություն»-ից է բխում: Յստակ է, որ պետական լուրջ հսկողությունը թույլ չի տվել հայ հոգեւորականների այցը պատմական Յայաստանի տարածքներ, իսկ երբեմն կատարված գաղտնի այցերին միշտ հետեւել են ճնշումներ, բռնարարքներ:

Ահա այսպիսի պայմաններում գոյատեւած քրիստոնեադավան սասունցիների հանդեպ արդեն 1950-ականներին սկսվում է իսլամացման ալիքը: 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից հայերին կոչ-պահանջ է ներկայացվել՝ ընդունել իսլամ, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում, որոնք մերժել են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են, ընդ որում՝ դրանցում ընդգրկվել են նաև ուժային կառույցները: Այս ամենի հետեւանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե արտաքուստ, տեղի է տվել եւ ընդունել իսլամ: Բանի մեթոդներին զուգահեռ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ մեթոդներ, եւ առանց հոգեւորականի հայկական գյուղեր հաճախ սկսել են այցելել մուսուլման հոգեւորականներ, շեյխեր, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում եւ

այլն: Այս մեթոդը նույնական արդյունքներ է տվել, քանի որ հովվապետից զրկված հայերը ստիպված են եղել գնալ այդ քայլին: Սակայն ուշագրավ է, որ ըստ մեր գրուցակիցների, իրենց ազգակիցների կրոնափոխությունը միանշանակ չի ընդունվել շրջապատի հայերի կողմից, որոնք անթաքույց քննադատել են կրոնափոխներին, եւ երբեմն դա օգնել է իսլամացման դադարեցմանը կամ դրա ծավալների նվազմանը: Ըստ տարբեր աղբյուրների՝ այդ վայրերում հայերի իսլամացման դեպքեր գրանցվել են նաև հետագայում, օրինակ՝ 1980-ականներին: Շարունակվող հալածանքները ստիպել են Սասունի վերապրած հայերի մի մասին տեղափոխվել Ստամբուլ, մի մասն ընդունել է թուրքական պետության եւ ստեղծված վիճակի պարտադրած կրոնը, իսկ նրանց մի մասն էլ վերածվել է ծպտյալ քրիստոնյաների:

Այս ամենը փաստում է, որ Թուրքիայի Յանրապետությունը շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման քաղաքականությունը, որն, ի վերջո, տվել է իր արդյունքները, եւ այսօր պատմական Յայաստանի տարածքում՝ չհաշված առանձին կղզյակները, բացահայտ քրիստոնյա հայեր գրեթե չկան:

## ԳՈՐԾ ԸՆԹԱՑՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ Սարուխանյան

Իրանում ներքաղաքական ճգնաժամը, որի ակտիվ շրջանն ավարտվեց հուլիսին, բերեց իսլամական հանրապետության շուրջ արտաքին քաղաքական նոր զարգացումների: ԵՄ քաղաքացիների ծերքակալումների արդյունքում՝ սրվեցին հակասություններն իրանի եւ եվրոպական պետությունների միջեւ: Միեւնույն ժամանակ, ակտիվացան գործընթացներն իրանական միջուկային ծրագրի շուրջ:

Ս.թ. օգոստոսին ԱՄՆ նախագահ Բ.Օբաման անուղղակի պահանջ ներկայացրեց Թեհրանին՝ ակտիվացնել համագործակցությունն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ եւ բավարարել ԱԷՄԳ եւ միջազգային հանրության՝ իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ պահանջները եւ մինչեւ սեպտեմբերի վերջը վերացնել բոլոր մտահոգությունները: Սեպտեմբերի 23-ին պետք է տեղի ունենա ՍԱԿ ԳՎ հերքական նիստը, որում քննարկվելու է ԱԷՄԳ գլխավոր քարտուղար Մ.Էլ-Բարադեյի գեկույցն իրանի միջուկային ծրագրի եւ ԱԷՄԳ-ի հետ համագործակցության վերաբերյալ: Նախատեսվում է, որ նիստի ժամանակ կարող է որոշում ընդունվել Թեհրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման վերաբերյալ, ինչին արդեն իսկ պաշտոնական մակարդակով կողմ են արտահայտվել Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան:

Օգոստոս ամսվա երկրորդ կեսն ու սեպտեմբերի սկիզբը վերածվեցին իրանական միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունների, իրանի դեմ հնարավոր ռազմական հարվածի եւ տնտեսական պատժամիջոցների կիրառման ակտիվ քննարկման շաբաթների, որոնք ի հայտ բերեցին ոչ միայն բուն միջուկային ծրագրին, այլ նաև միջազգային քաղաքականությանն ու անվտանգությանը վերաբերող հակասությունների մի մեծ փունջ: Միաժամանակ, ԱԷՄԳ գլխավոր քարտուղարի անվան եւ «իրանական իհմնախնդրում» նրա անաշառության շուրջ ֆրանսիական եւ ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչությունների կողմից հրահրվեց լուրջ սկանդալ: Օգոստոսի 25-ին Ֆրանսիայի փոխարտգործնախարարը մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ իր գերատեսչությունն ունի բոլոր հիմքերը՝ մեղադրելու ԱԷՄԳ-ին եւ նրա գլխավոր քարտուղար Մ.Էլ-Բարադեյին՝ իրանի միջուկային ծրագրին վերաբերող մի

շարք կարեւոր փաստեր միջազգային հանրությունից թաքցնելու մեջ: Դամաձայն ֆրանսիական, իսկ հետո նաև ամերիկյան դիվանագետների, Իրանի միջուկային գործունեությանը վերաբերող շատ կարեւոր տեղեկատվություն, որին տիրապետում է ԱԷՄԳ-ն, չի ընդգրկվել գործակալության վերջին գեկույցում, իսկ այս տեղեկատվության մասին հայտարարությունները գործակալության գլխավոր քարտուղարն արել է միայն իր մամլո ասուլիսների ժամանակ, որոնք, չլինելով իրավական նշանակության միջոցառումներ, փաստորեն, միջազգային հանրության համար հիմք չեն ստեղծում Թեհրանի նկատմամբ իրավաբանորեն հիմնավորված պատժամիջոցներ կիրառելու համար: Իր հերթին ԱԷՄԳ գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ այս մեղադրանքները «քաղաքական հիմք ունեն»՝ ավելացնելով, որ «նման հայտարարությունները, որոնք ուղղված են մասնագետների աշխատանքը խանգարելուն եւ նպատակ ունեն գրկել գործակալությանը անկախ եւ անաչառ կառույցի հեղինակությունից, խախտում են գործակալության կանոնադրությունը եւ պետք է անմիջապես կանխարգելվեն»:

Սակայն հետագա զարգացումները, այդ թվում ԱԷՄԳ-ում ամերիկյան ներկայացուցի նոր մեղադրական հայտարարությունները, ցույց տվեցին, որ սկանդալը մարման միտում չունի: Ամդրադառնալով այն փաստերին, որոնց վերաբերյալ ԱԷՄԳ գլխավոր քարտուղարը լրել է, ամերիկյան ներկայացուցիչն ասաց, որ խոսքը վերաբերում է Բարադեյի վերջին այն հայտարարությանը, թե «հարաբերություններն Իրանի հետ մտել են փակուղի» եւ որ այդ հայտարարությունը չի մտել ԱԷՄԳ վերջին գեկույցի մեջ: Սակայն իրականում ԱԷՄԳ-ն իր գեկույցը նվիրել է Իրանի միջուկային հետազոտություններին, անդրադարձել դրանց տեխնիկական կողմին եւ անգամ մեծ ցանկության դեպքում իր գեկույցում չեր կարող ոչ տեխնիկական բնույթի այնպիսի գնահատական տալ, ինչպիսին «հարաբերությունները մտել են փակուղի»-ն է: Որպես կանոն, նման գնահատականները միշտ էլ տրվել են ԱԷՄԳ գլխավոր քարտուղարի մամլո ասուլիսների եւ հաղորդագրությունների ժամանակ, ինչն, իսկապես, գրկում է դրանց իրավական կարգավիճակից եւ վերածում քաղաքական բնույթի գնահատականի: Այս մասին, իհարկե, հայտնի է թե՝ ֆրանսիացիներին, թե՝ ամերիկացիներին, եւ այս պատճառով սիսալ կլիներ Ել-Բարադեյին ուղղված մեղադրանքները դիտարկել իրավական տեսանկյունից: Խնդիրն ավելի քաղաքական է եւ պայմանավորված կարող է լինել հետեւյալ կարեւոր գործոններով.

1. ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան նպատակ ունեն ՄԱԿ գՎ եւ ԱԻ նիստերում բարձրացնել Իրանի դեմ նոր տնտեսական պատժա-

միջոցների հարցը: ԱԵՄԳ վերջին գեկույցը նման պատժամիջոցների համար իրավական հիմք չի ստեղծում, քանի որ իրանի ողջ միջուկային գործունեությունը, այդ թվում՝ ուրանի հարստացումը, չեն խախտում միջազգային իրավական նորմերը եւ Միջուկային գենքի չտարածման մասին պայմանագիրը: Այս պարագայում, խոսելով «թաքցված փաստերի մասին», արեւմտյան պետությունները հիմք են ստեղծում ԱԵՄԳ գեկույցի վրա չիենված պատժամիջոցների կիրառման քննարկումներ սկսելու համար:

2. Բուն ֆրանսիան վերջին տարիներին ակտիվացրել է «իրանական քաղաքականությունը», քայլեր է ձեռնարկում Թեհրանի վրա լրացուցիչ ճնշումներ գործադրելու համար, ինչը պայմանավորված է նրանով, որ Մ.Ահմադինեժադի կառավարությունն անում է ամեն ինչ ֆրանսիական «Տոտալ» նավթագազային ընկերությանը Իրանի հետ ունեցած բազմամիլիարդ արժողությամբ պայմանագրերից գրկելու եւ իրանական էներգետիկ ոլորտից դուրս մղելու համար:

3. Վաշինգտոնն իր հերթին շարունակում է ԱԵՄԳ հեղինակագրկման՝ դեռևս Զ.Բուշ-կրտսերի նախագահության ժամանակ որդեգրած քաղաքական գիծը, որի նպատակն է ԱԵՄԳ-ին գրկել միջուկային գենքի տարածման դեմ տարվող պայքարի մենաշնորհից եւ այդ պարտականությունը վերաբաշխել առանձին պետությունների միջեւ, ինչը թույլ կտա նույն ԱՄՆ-ին միջուկային պոտենցիալի ստեղծման կանխարգելման նպատակով ինքնուրույն, այդ թվում նաեւ ռազմական միջոցառումներ իրականացնել այս կամ այն պետության դեմ:

Ինչ վերաբերում է բուն Իրանին, ապա ԱԵՄԳ-ի շուրջ ստեղծված սկանդալային իրավիճակը բավական դրական ֆոն ստեղծեց Թեհրանի համար սեփական միջուկային ծրագրի շուրջ բանակցություններն ավելի նպաստավոր դիրքերից շարունակելու համար: Մ.Էլ-Բարադեյն ու ԱԵՄԳ-ն անուղղակիորեն դարձան Իրանի դատապաշտպանները, իսկ միջազգային հանրության շրջանում ստեղծված անհամաձայնության մթնոլորտն էլ ավելի մեծացրեց Թեհրանի մանեւրելու շրջանակները:

Իրանում միջուկային ծրագրի քննարկումներն ակտիվացան հիմնականում օգոստոսի վերջերին, քանի որ հուլիս-օգոստոս ամիսներին Իրանում ներքաղաքական զարգացումները միջուկային ծրագրով եւ արտաքին քաղաքական հիմնախնդիրները մղել էին հասարակական քննարկումների հետին պլան: Նախագահական ընտրությունների նախկին մասնակից Մ.Ջարուբիի բաց նամակը Փորձագետների վեհաժողովի նախագահ Ա.Ա. Քաշեմի-Ռաֆսանջանիին, որում նա բազում օրինակներ եւ փաստեր բերեց ձերբակալված ընդդիմադիրների դեմ բռնությունների եւ

իրանական բանտերում կանանց զանգվածային բռնաբարությունների մասին, իրանական քաղաքական եւ լրատվական դաշտից դուրս մղեց մնացած գործընթացների քննարկումները, այդ թվում նաեւ միջուկային ծրագրի շուրջ: Դրան նպաստեց նաեւ օգոստոսին կառավարության ձեւավորման գործընթացը:

Սակայն արդեն օգոստոսի վերջին, երբ Իրանը եւս մեկ անգամ մերժեց ԱԵՄԳ առաջարկը եւ Բ.Օբամայի պահանջը, միջուկային հիմնախմնդիրը նորից իր կարեւոր տեղը գրադեցրեց իրանական քաղաքական գործընթացներում:

Այսպես, արդեն սեպտեմբերի 9-ին իրանական կողմը ԱԵՄԳ-ին եւ «վեցնյակին» (Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Չինաստան) ներկայացրեց իր հերթական «փոխազիջումային առաջարկը» միջուկային խնդրի վերաբերյալ, որը նպատակ ուներ «վերացնել բոլոր անհամաձայնություններն Իրանի եւ «վեցնյակի» միջեւ»: Չնայած իրանական առաջարկությունները պաշտոնապես չեն հրապարակվել, սակայն համաձայն եվրոպական դիվանագետների, դրանք «որեւէ նոր բան» չեն պարունակում եւ չեն ենթադրում Իրանի կողմից ուրանի հարստացնան կասեցում կամ ծավալների սահմանափակում, ինչը Թեհրանին ներկայացվող հիմնական պահանջն է: Չնայած Իրանը համաձայնել է բանակցել իր կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթի շուրջ, որեւէ լուրջ փոփոխություն Իրանի դիրքորոշման մեջ սպասել չի կարելի: Արավելի վկայությունն է Իրանի առաջնորդ Ա.Խամենեիի հայտարարությունը, որը նա արեց սեպտեմբերի 11-ին իր ուրբաթօրյա աղոթքի ժամանակ. «Պետք է մնալ կուր քո օրինական իրավունքների պաշտպանման գործում, բոլոր ոլորտներում, այդ թվում նաեւ միջուկային: Յրաժարումը դրանցից պարտություն է նշանակում»:

Նշենք, որ Իրանի արդեն ավանդական դարձած այս մոտեցումը ներկա փուլում պայմանավորված է ոչ միայն բուն միջուկային ծրագրով, այլև այն ներքաղաքական զարգացումներով, որոնք տեղ են գտել իսլամական համրապետությունում: Նաև ավանդական դարձած այս մոտեցումը ներկայագույն կարող է մասամբ շեղել հասարակության ուշադրությունը ներքաղաքական զարգացումներից, մասամբ լիքքաթափել ներքաղաքական հակասությունները:

Ներկայումս Իրանի համար առաջնային նշանակություն ունի ԱՄԿ ԳՎ եւ ԱԽ նիստերում նոր պատժամիջոցների մասին հնարավոր որոշումների ընդունումից խուսափելը: Նման հեռանկարից, չնայած կոշտ հայտարարություններին, ցանկանում են խուսափել նաեւ ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը, քանի որ երկու տարի առաջ մտցված վերջին պատժամիջոցներից հետո հաջորդ

քայլը պետք է դառնան իրանական նավթի գնման սահմանափակումները, ինչին Արեւմուտքը պատրաստ չէ, նանավանդ համաշխարհային ներկա ճգնաժամի պատճառով ստեղծված գլոբալ ֆինանսատնտեսական անկայունության պայմաններում:

Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումից խուսափելու նպատակով է հավանաբար պայմանավորված Ֆրանսիայի առաջարկը՝ մինչեւ սեպտեմբերի 23-ի ՄԱԿ ԳՎ նիստը հանդիպում անցկացնել Իրանի եւ «Վեցնյակի» բարձրաստիճան ներկայացուցիչների միջեւ, որի կազմակերպմանք է ներկայումս գրադկում ԵՄ Արտաքին քաղաքականության գծով հանձնակատար Խ.Սոլանան:

Ինչեւէ, չնայած նման հանդիպման ժամանակ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ձեւավորված սառուցը դժվար թե հալվի, սակայն այն կարող է արեւմտյան պետությունների համար Իրանի նկատմամբ լուրջ պատժամիջոցներ չկիրառելու հիմք հանդիսանալ: Իսկ Թեհրանին միջազգային հարթությունում իր միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակը միայն ձեռնտու է, քանի որ վերսկսված ակտիվ բանակցությունները, հանդիպումներն ու նոր պաշտոնական առաջարկները լեզիտիմացնում են Իրանի վերընտրված նախագահին եւ նրա կառավարությանը, ինչն այժմեական է դարձել երկրի ներսում վերջին բախումներից, զոհերից եւ ծերբակալություններից հետո:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱԴՐԵԶԱՆՈՒՄ

### Արաքս Փաշայան

Վերջին շրջանում Աղրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում իսլամն էական նշանակություն է ձեռք բերել: Իսլամի դերի ակտիվացումն Աղրբեջանում, ըստ Էռլյան, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝ սոցիալ-տնտեսական խնդիրները, հիասքափությունն իշխանությունների եւ պաշտոնական իսլամի ներկայացուցիչների նկատմամբ, խոսքի ազատության բացակայությունը եւ այլն: Գիտակցելով աշխարհիկ իմաստիտուտներին սպառնացող մարտահրավերները՝ Աղրբեջանի իշխանությունները մշտապես փորձում են թուլացնել կրոնի դերը, ինչը դրսեւորվում է կրոնական իրողությունների նկատմամբ տարաբնույթ սահմանափակումների կիրառմամբ: Իսլամական աղոթքի հրապարակային դրսեւորումները կանխելու նպատակով 2008-ին արգելվեց մզկիթի բակում կամ հարակից տարածքում աղոթելը: Բացի այդ, Աղրբեջանում արգելված է իսլամական գլխաշորով (հիջար) մուտք գործել կրթական հաստատություններ, պաշտոնական փաստաթղթերի համար գլխաշորով նկարվել: Փաստացիորեն, Քեյրար Ալիեւի իշխանության գալուց ի վեր եւ մինչ օրս պաշտոնական իսլամից դուրս գործող կրոնական քարոզիչների, ինչպես նաև կրոնականացված տարրերի նկատմամբ իրականացվել են տարաբնույթ ծնչումներ:

Վերջին շրջանում իսլամի հարցում աղրբեջանական իշխանությունների մոտեցումներում նշմարելի են որոշակիորեն կոշտ շեշտադրումներ, ինչը փաստում է երկրում իսլամական գործոնի ակտիվացումը կանխելու իշխանությունների ձգտումը: 2009թ. հունիսի վերջին Աղրբեջանի խորհրդարանը կրոնի դավանման ազատության մասին օրենքում փոփոխություններ մտցրեց, համաձայն որի՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվում է իսլամական կրոնական արարողություններ վարելը: Դրանք կարող են իրականացնել միայն Աղրբեջանի Յանրապետության այն քաղաքացիները, ովքեր կրոնական կրթություն են ստացել Աղրբեջանում: Այդ գործընթացի վարումն ամբողջովին փոխանցվեց Կովկասի մուսուլմանների վարչությանը (ԿՄՎ): Այդպիսով, իշխանությունները փորձեցին օրենքի ուժով կասեցնել Աղրբեջանի համար ոչ ավանդական կրոնական ուղղությունների քարոզիչների եւ որոշակիորեն ընդդիմադիր հոգեւորականների գործունեությունը:

Հայտնի է, որ Ադրբեջանի անկախացումից ի վեր բազմաթիվ երիտասարդներ կրոնական կրթություն են ստացել իսլամական աշխարհի տարբեր, այդ թվում՝ սուննիական աստվածաբանական կենտրոններում, ինչը նաեւ իրականացվել է պաշտոնական խողովակներով։ Նրանց մեջ կան բավական խարիզմատիկ գործիչներ, որոնցից է Բաքվի «Արու Բաքր» մզկիթի երիտասարդ ինամ, սուննի իսլամի սալաֆիական ուղղության քարոզիչ Հաջի Համեթ Սուլեյմանովը, ով աստվածաբանական կրթություն է ստացել Սաուդյան Արաբիայում։

Վերջերս Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների ալիք առաջացրին մի քանի մզկիթների փակման եւ քանդելու մասին իշխանությունների որոշումները։ Դրանք քննարկման առարկա դարձան սեպտեմբերի 7-ին Բաքվում «Խողի եւ կրոնի դավանության ազատության պաշտպանության կենտրոնի» (DEVAMM) նախաձեռնությամբ «Խողանական մշակույթի մայրաքաղաքի մզկիթների քանդումը» խորագրով կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ։ Բանախոսների համոզմամբ՝ միայն 2009 թվականին երեք մզկիթ քանդելու իրողություն աննախադեպ է, ինչը հեղինակագրկուն է Ադրբեջանն իսլամական աշխարհում, այն դեպքում, եթե 2009-ին Բաքուն Խողանական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) կողմից հայտարարվել է իսլամական մշակույթի մայրաքաղաք։

Նախ, ապրիլի 25-ին Բաքվում բարեկարգման հիմնավորմամբ փակվեց Շեիխուլար մզկիթը, որ կառուցվել էր Թուրքիայի կրոնական վարչության կողմից։ Դրանից հետո քանդվեց Բաքվի Մուհամեդ մարգարեի մզկիթը՝ որպես «անօրինական շինություն»։ Որոշ փորձագետներ մզկիթի քանդումը կապեցին կրոնական ծայրահեղականության վտանգի եւ ապրիլին Ադրբեջանի պետական նավթային ակադեմիայում կազմակերպված ահարեկչության հետ։ Մայիսի 10-ին փակվեց եւ մյուս օրը լուսադեմին քանդվեց 1940-ականների վերջերին Կասպից ծովի ափին գտնվող «Նավթային քարեր» վայրում կառուցված մզկիթը։ Դեպքի կապակցությամբ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի կոնհիտեի նախագահը հավաստիացրել էր, որ մզկիթը քանդվել է տեխնիկական անվտանգության շարժառիթով, քանի որ կառուցված է եղել կավային գրունտի վրա։ Եվ միայն վերջերս իշխանությունները որոշում ընդունեցին քանդել Բաքվի «Ֆատիմեհ-Զահրա» մզկիթը։ Հատկանշական է, որ մզկիթը քանդելու մասին տնտեսական դատարանի որոշումը համընկավ Ռամադան ամսվա հետ, ինչը դիտարկվում է որպես անարգանք հավատացյալների հասցեին։ «Ֆատիմեհ-Զահրա» մզկիթի կրոնական համայնքի ղեկավար Հաջի Սեյիդի պարզաբանմամբ՝ իրենք 1996թ. գնել

Են հոդը եւ մինչեւ 1998թ. հավաքել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա ձեռնամուխ եղել շինարարությանը, որը որոշ ժամանակ ընդհատվել է ֆինանսական դժվարությունների պատճառով: Իսկ երբ շինարարությունն այլեւս ավարտին է հասել, դատարանը որոշել է քանդել այն՝ որպես «անօրինական կառույց»: Շատերի կարծիքով՝ մզկիթը քանդելու իրական պատճառը դրա տարածքը վաճառքի հանելն է:

Գրեթե բոլոր բանախոսները միակարծիք էին այն հարցում, որ մզկիթ քանդելն Աստծու դեմ ուղղված հանցանք է, մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում: DEVAMM-ի նախագահ, շիա հոգեւորական, իրավապաշտպան Ի. Էբրահիմօղլին նույնիսկ վկայակոչեց ԻԿԿ պարագան՝ նշելով, որ միջազգային այդ կազմակերպության դիրքորոշումն Աղրբեջանի նկատմամբ կարող է փոխվել, մինչդեռ վերջինս միջազգային մակարդակում, որպես կանոն, ակտիվորեն աջակցել է Աղրբեջանին: Իբրահիմօղլու համոզմանք՝ նույնիսկ խորհրդային ժամանակներում իշխանությունները թույլ չեն տա, որպեսզի կարծ ժամանակահատվածում միանգամից երեք մզկիթ քանդվի: Մզկիթները փակվում են, բայց չեն քանդվում: Նրա համոզմանք՝ Աղրբեջանի ապագա սերունդը մեծանում է մզկիթներ քանդող երկրի քաղաքացու բարդություն:

«Մեշեդի Դադաշ» մզկիթի համայնքի ղեկավար Յաջի Շահին Ղասանլիի կարծիքով՝ երկու մզկիթների քանդումը ինչ-որ տեղ կարելի է համարել պատահականություն, սակայն երրորդի պարագայում խոսքը կրոնի դեմ նպատակառուղյան միտման մասին է: Նա մզկիթների քանդումը համարեց ոչ միայն հավատացյալների, այլև ողջ աղրբեջանական հասարակության խնդիրը: Յաջի Շահինի կարծիքով՝ Աղրբեջանում տագնապում են, որ, օրինակ, Շուշիի մզկիթը գտնվում է ողբալի վիճակում, բայց այն քանդված չէ:

Նշենք, որ 2008թ. օգոստոսին իշխանությունները փակեցին նաեւ «Աբու Բաքր» մզկիթը՝ պատճառաբանելով, որ նոյն տարվա օգոստոսի 17-ին մզկիթի դեմ իրականացված ահաբեկչությունից հետո այն այլեւս անվտանգ չէ հավատացյալների համար: Սակայն իրականում իշխանություններին մտահոգում եր երկում սալաֆիականության ընդլայնման փաստը: Խնդիրն այն է, որ Աղրբեջանում գաղափարախոսական բացը փորձ է արվում լրացմել առանձին մզկիթներում, որոնք խոսքի ազատության բացակայության պայմաններում դառնում են յուրօրինակ քաղաքական ակումբներ:

Յատկանշական է, որ Աղրբեջանում իսլամին առնչվող խնդիրների քննարկումների ժամանակ շատ դեպքերում քննադատության թիրախ է դառնում պաշտոնական իսլամը ներկայացնող Աղրբեջանի հոգեւոր

առաջնորդ, ԿՄՎ նախագահ Ալլահյօնոքյուր Փաշազադեն, ով համարվում է իսլամի հարցում իշխանությունների գծի աջակիցը: Շատերը Փաշազադենի համարում են կոռումպացված գործիչ, ով առաջնային է համարում ոչ թե իսլամի, այլ՝ սեփական շահերը: Այդ տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում «Ֆատիմեթ-Զահրա» մզկիթի փակման կապակցությանը Փաշազադենի ուղղված Ի.Իբրահիմօղլու նամակը, որում վերջինս խիստ մտահոգություն է հայտնում Ռամադան ամսին մզկիթի փակման համար՝ զգուշացնելով անդրերկրային կյանքում դրա հետեւանձների մասին եւ խնդրում աջակցել: «Թուրան» գործակալությանը տված հարցազրույցում շեյխուլիսլամը նշել է, որ տեղյակ է խնդրին եւ կանի ամեն ինչ, որպեսզի մզկիթը չքանդվի:

Նշենք նաեւ, որ Ադրբեջանի համար որոշակի վտանգ է ներկայացնում նաեւ իսլամական արմատականությունը, որն Ադրբեջան է ներթափանցում նաեւ Յյուսիսային Կովկասից: Ասվածի ապացույցը դադստանյան ծագում ունեցող «Անտառային եղբայրներ» արմատական կազմակերպության գործունեությունն էր Ադրբեջանում: Վերջին շրջանում Յյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում տեղի ունեցող ահաբեկչությունները եւ իսլամական գործոնով պայմանավորված ներքաղաքական անկայունությունը տագնապի ալիք են ստեղծել նաեւ Ադրբեջանում: Կրոնական ծայրահեղականության հնարավոր տարածումն այդ երկրում մտահոգություն է ստեղծել հասարակական գրեթե բոլոր շրջանակներում, ինչը փորձում են փարատել իշխանությունները: Ադրբեջանի պետական սահմանային ծառայության ղեկավար Ե.Գուլիելը օգոստոսի 18-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Ռուսաստանի եւ Ադրբեջանի սահմանը հյուսիսային շրջանում ամբողջովին վերահսկվում է: Իսկ օգոստոսի 19-ին Ադրբեջանի կրոնական կառույցների հետ աշխատանքի պետական կոմիտեի մամլո քարտուղարը նշել է, որ Յյուսիսային Կովկասում տեղի ունեցող դեպքերն Ադրբեջանի համար վտանգ չեն ներկայացնում ո՞չ կրոնական իրավիճակի, ո՞չ էլ կրոնական խմբերի գործունեության տեսանկյունից: Սակայն միշտ չէ, որ իշխանությունների հավաստիացումները միանշանակ են ընդունվում: Ադրբեջանցի լրագրող Զ.Բայրամովայի կարծիքով՝ գաղափարախոսությունը հզոր երեւույթ է եւ կարող է հաղթահարել ցանկացած պատմեց:

Ադրբեջանի հասարակական-քաղաքական եւ կրոնական առանձին գործիչներ համոզված են, որ կրոնական ծայրահեղականությունն Ադրբեջանում այլևս տարածում է ստացել: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Ա.Ալիզադեի համոզմամբ՝ Ադրբեջանի կրոնական իրավիճակի վրա ակնհայտ է Յյուսիսային Կովկասի ազդեցությունը:

Պատահական չէ, որ Աղրբեջանում վերջին շրջանում շատ է քննարկվում կրօնական ծայրահեղականության հնարավոր ալիքը կանխելու հարցը: Յատկանշական է, որ այդ հարցում մոտեցումները տարբեր են: Կան տեսակետներ, որոնք սպասարկում են իշխանության քաղաքականությանը՝ փորձելով հիմնավորել կոչտ միջոցառումների անհրաժեշտությունը:

Սակայն կան նաև այլ տեսակետներ, որոնք դեմ են ուժային մեթոդներին եւ առաջ են քաշում այլ ուղիներ, մասնավորապես՝ բարեփոխումների գաղափարը: Յամեթ Սուլեյմանովի համոզմանը՝ իրավապահ մարմինների կողմից իսլամական արմատականության կանխումն անընդունելի է, քանի որ արդյունավետ չէ եւ հակառակ արդյունքը կունենա: Շահին Ղասանլիի կարծիքով՝ արգելելը ոչինչ չի տա, անհրաժեշտ է կրոնի մասին օրենքում լուրջ բարեփոխումներ մտցնել, երկրում զարգացնել կրոնական լուսավորչականությունը: Նրա համոզմանը՝ փորձը ցույց է տալիս, որ կրոնական արմատականությունը մեծ թափ է ստանում կրոնի ազատության իրավունքները ուժնահարելու պարագայում, իսկ այդ դեպքում հասարակությունն ու երկիրը արմատականության տեսանկյունից ավելի խոցելի են դառնում:

Աղրբեջանցի իսլամագետ Էլմիր Կուլիելի կարծիքով՝ կրոնական մշակույթը երկրում զարգացած չէ: Կրոնական ծայրահեղականության դեմ պայքարի հարցում Կուլիելին ունի սեփական տեսակետը: Ըստ նրա՝ կրոնական արժեքները պետք է մեկնաբանեն ոչ թե փոքրաթիվ կրոնական խմբերն ու արտերկրից ժամանած միսիոներները, այլ հենց աղրբեջանցի մտավորականները: Նրա կարծիքով, եթե մարդիկ խորթից հասկանան իսլամը, ապա դժվար կլինի նրանց խարել իսլամական սպառնալիքի մասին լեզենդներով, իսկ աղանդավորների քարոզներն Աղրբեջանում այլևս պահանջարկ չեն ունենա:

Աղրբեջանում տարածում ունեցող առանձին տեսակետների համաձայն՝ իշխանությունները իսլամին վերաբերող հարցերում չեն կարողանում ճիշտ կողմնորոշվել, իսկ կրոնական իրավիճակի ներկա կայունությունը խիստ հարաբերական է: Այնպես որ՝ իսլամն Աղրբեջանում որոշակի պոտենցիալ ունի՝ դառնալու լուրջ գործոն հասարակական-քաղաքական զարգացումներում:

## ԱԴՐԵԶԱՆ – ԹՈՒՐՔՄԵԽԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ Արտաշես Տեր-Հարությունյան

Վերջին շաբաթների իրադարձությունները հաստատում են, որ Ադրբեյջանի ու Թուրքմենստանի հարաբերություններում ավելի օրինաչափ են հակասությունները, քան համագործակցությունը:

Ս.թ. հուլիսի 25-ին ելույթ ունենալով կառավարության անդամների առջեւ՝ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգոլի Բերդիմուհամեդովը հայտարարեց, թե պաշտոնական Աշխաբադը մտադիր է դիմել Միջազգային արքիտրաժային դատարան՝ վիճարկելու Կասպիցում գտնվող «Սերդար», «Օմար» եւ «Օսման» նավթա-գազահանքերի պատկանելության հարցը, որոնք Բաքուն համարում է իրենը<sup>1</sup>: Այդ նպատակով Բերդիմուհամեդովը հանձնարարեց կառավարությանը՝ վարձել միջազգային իրավունքին քաջատեղյակ իրավաբաններ:

Մոտ մեկ ամիս անց՝ օգոստոսի 31-ին, երկրի Անվտանգության պետական խորհրդի նիստի ժամանակ Բերդիմուհամեդովը հայտարարեց, թե մինչեւ 2015թ. Կասպիցում Թուրքմենստանը կիմնի ռազմածովային բազա, որը պետք է գրադաւոր թուրքմենական ջրային տարածքների պաշտպանությամբ: Այդ նպատակով երկրի սահմանապահ ծառայությունը ձեռնամուխ է լինելու արագընթաց մոտորանավակների գննանը, բացի այդ, ձեռք են բերվելու ժամանակակից հրթիռակիր երկու նավեր: Ինչն է ուշագրավ՝ Ադրբեյջանի հետ ունեցած ծովային հակասությունների ողջ ընթացքում Աշխաբադը երբեք նման որոշում չէր կայացրել:

Իհարկե, այսօր իհմնագուրկ է խոսել թուրքմենա-ադրբեյջանական հակամարտության մասին, բայց փաստն այն է, որ՝

❖ Աշխաբադն ու Բաքուն հակասություններ ունեն երկուսի համար էլ էական հանդիսացող նավթագազային ոլորտում,

❖ չեն կարողանում լուծել այդ հակասությունները անկախությունից ի վեր (շուտով՝ մոտ 20 տարի),

❖ եւ ամենակարեւոր՝ կողմերը գնալով կոշտացնում են իրենց բանակցային մոտեցումները:

Չնայած արդեն սեպտեմբերի 3-ին Ալիեւ-կրտսերի ու Բերդիմուհամեդովի միջեւ կայացած հեռախոսային խոսակցության ընթացքում վերջինս

հրավիրեց իր աղբրեջանցի գործընկերոջը Աշխարադ՝ քննարկելու առկա խնդիրները, սակայն առնվազն կասկած է առաջացնում այն, որ երկու երկրները, որոնք անցած տարիների ընթացքում չեն կարողացել լուծել խնդիրը, կարողանան արագորեն հաղթահարել խոչընդոտները: Թերեւս, պետք է կարծել, որ Բաքուն ու Աշխարադն իրենց պորտֆելներում չունեն երկուստեք ընդունելի առաջարկություններ:

## Տեղեկանք

Յանքավայրերի շուրջ երկու երկրների հակասությունները հրապարակ իջան 1997թ.: 1996թ. Սափարմուրադ Նիյազովի Բաքու կատարած այցից հետո, 1997թ. Փետրվարին պաշտոնական Աշխարադը հայտարարեց, որ «Ազերի» ու «Չիրադ» հանքավայրերը պատկանում են իրեն: Նույն թվականի մայիսին Աղրբեջանի արտգործնախարարությունը հատուկ նոտայով դատապարտեց այդ հայտարարությունը:

Կարճ ժամանակ անց՝ 1997թ. հուլիսի 4-ին Մոսկվայում Աղրբեջանի պետական նավթային ընկերությունը ռուսական ԼҮԿօյլ եւ Ռօշեֆտե ընկերությունների հետ կնքեց «Քյափազ» հանքավայրի շահագործման վերաբերյալ պայմանագիր, ըստ որի՝ ԼҮԿօյլ-ին էր անցնելու շահույթի 30%-ը, Ռօշեֆտե-ին՝ 20%-ը, իսկ մնացած 50%-ը՝ աղրբեջանցիներին: Աշխարադը բողոքեց, եւ Մոսկվայի ճնշման հետեւանքով Ռօշեֆտե-ը հրաժարվեց պայմանագրից, իսկ ԼҮԿօյլ-ը մինչ օրս էլ չի ընդունում եռակողմ պայմանագրի լուծարումը<sup>2</sup>:

2002թ. ապրիլին Աշխարադում կայացած մերձկասպյան հինգ պետությունների ղեկավարների գագաթաժողովի ժամանակ Թուրքմենստանի նախագահ Նիյազովը հայտարարեց, թե հնարավոր է, որ Աղրբեջանի հետ վիճելի համարվող հանքավայրերի շրջանում ծավալվեն ռազմական գործողություններ: Ինչից հետո, ԽՍՀՄ փլուզումից ի վեր առաջին անգամ՝ 2002թ. օգոստոսին, Ռուսաստանը կասպիցում անցկացրեց ռազմածովային լայնամասշտար զրավարժություններ, որոնց մասնակցելու հրավեր ստացան Ղազախստանն ու Աղրբեջանը:

Այդ իրադարձություններից հետո հանքավայրերի հարցը կրկին սրվեց 2005թ., երբ թուրքմենական կողմը փորձեց «Քյափազի» շահագործման վերաբերյալ պայմանավորվել կանադական Buried Hill Energy ընկերության հետ: Չնայած այդ տարվա հունվարին ու նոյեմբերին թուրքմենական իշխանությունների հետ ընկերությունը երկու անգամ պայմանավորվեց հանքավայրում աշխատանքների մեկնարկի մասին, բայց Բաքվի հակագդեցության հետեւանքով գործը տեղից չշարժվեց:

Յայտնի է, որ 1997թ. մայիսին Աշխաբադում կայացած Տնտեսական համագործակցության կազմակերպության (OEC) գագաթաժողովի շրջանակներում Յեյդար Ալիեւի ու Սափարմուրադ Նիջազովի հանդիպման ժամանակ վերջինս Ադրբեջանի նախագահին է ներկայացրել դեռեւս ԽՄԴՄ օրոք իրատարակված հատուկ քարտեզներ, որոնց համաձայն՝ «Քյափազ» ու «Ազերի» հանքավայրերը գտնվում են Կասպիցի թուրքմենական հատվածում: Բացի այդ, ըստ խորհրդային գծապատկերների, «Չիրաղ» հանքավայրը ադրբեջանական ափից գտնվում է 148կմ հեռավորության վրա, իսկ թուրքմենականից՝ 132կմ, «Ազերի» հանքավայրը ադրբեջանական ափից գտնվում է 160կմ հեռավորության վրա, իսկ թուրքմենականից՝ 118կմ, «Քյափազ» հանքավայրը ադրբեջանական ափից գտնվում է 184կմ հեռավորության վրա, իսկ թուրքմենականից՝ 104կմ: Մինչդեռ, Ռուսաստան–Ղազախստան, Ռուսաստան–Ադրբեջան եւ Ղազախստան–Ադրբեջան պայմանավորվածությունների համաձայն, յուրաքանչյուր զույգի միջեւ ծովային սահման որոշվեց երկու պետությունների ափերից հավասար հեռավորության վրա գտնվող գիծը: Այդ պարագայում «Քյափազ», «Ազերի» հանքավայրերն ամբողջությամբ, իսկ «Չիրաղ» հանքավայրը մասնակի պետք է անցնեն Թուրքմենստանին: Ավելորդ չէ նշել, որ այսօր ադրբեջանական նավթի ավելի քան 3/4-րդը արդյունահանվում է «Ազերի»–«Չիրաղ»–«Գյունեշլի» հանքավայրերից:

### **Իրավիճակային դիտարկում**

Թե ինչու Աշխաբադում որոշեցին իրապարակային ճնշման անցնել քարվի ուղղությամբ, միանշանակ դժվար է ասել: Միգուցե, Թուրքմենստանում համարում են, որ հուլիսի 13-ին Անկարայում «Nabucco»-ի վերաբերյալ պայմանագրի ստորագրումից հետո, հանքավայրերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ինչպես արեւատյան երկրների (ԱՄՆ, ԵՄ, Թուրքիա), այնպես էլ Ադրբեջանի կողմից ավելի ընկալելի կդառնա, քանի որ «Nabucco»-ի իրականություն դառնալուց հետո Թուրքմենստանի արժեքը միայն աճելու է, ընդ որում՝ Յարավային Կովկաս–Կասպից–Կենտրոնական Ասիա գծում գործող բոլոր ուժի կենտրոնների համար: Ամեն դեպքում, Աշխաբադի այս նախաձեռնությունը նոր՝ ավելի քարձր կարգավիճակ կտա նրան ընթացող խաղում:

Մյուս կողմից, ռուսական աղբյուրների համաձայն, Թուրքմենստանի նման քայլը պետք է պայմանավորել Ռուսաստանի նպատակով՝ խոչընդոտել «Nabucco»-ի գործարկումը: Ինչը հատկապես արդիական դարձավ, եթք օգոստոսի 6-ին Անկարայում Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր

Պուտինը իր թուրք գործընկերոց հետ պայմանավորվեց դեպի Եվրոպա ուղղված «Խոհեմայություն»-ի կառուցան վերաբերյալ:

Միաժամանակ, ցանկացած լուրջ փոփոխություն կասպիցի էներգետիկ փոխասավորվածությունում կունենա աշխարհաքաղաքական հետեւանքներ, որոնք ի վիճակի են ազդելու հարավկովկայան, իրանական, կենտրոնաասիական եւ անգամ՝ հյուսիսկովկայան ուղղություններով: Մի կողմից՝ այն իրողությունն է, որ Ադրբեյջանից ու Թուրքմենստանից բացի կասպյան մյուս երեք երկրները տարբեր պատճառներով ուղղակի շահագրգուված են, որ թուրքմենա-ադրբեյջանական խնդիրները մնան ուժի մեջ, ուստի դժվար թե չմիջամտեն նոր զարգացումների դեպքում: Մյուս կողմից՝ Աշխարհադի կամ Բաքվի ձեռնարկած ցանկացած քայլ, որն ի վիճակի է փոխել կասպյան փոխասավորվածությունը, չի կարող չենթադրել տարածաշրջանում ներկա ուժի կենտրոնների ներգրավվածություն: Ուստի, ընդամենը ժամանակ է հարկավոր՝ վերջնականապես հասկանալու, թե ով է կանգնած Բերդիմուհամեդովի հայտարարությունների հետեւում:

Եվ վերջում, թուրքմենա-ադրբեյջանական հակասությունները դեռ չեն հասել այն աստիճանի, որ նշանակություն ձեռք բերեն Արցախի շուրջ ընթացող զարգացումներում: Բայց դա չի նշանակում, թե պետք է ընդհանրապես անտեսել գոնե նախնական պայմանավորվածությունների այն օբյեկտիվ հնարավորությունը, որը կարող է ձեւավորվել Երեւանի ու Աշխարհադի համար հայ-ադրբեյջանական հակամարտության եւ թուրքմենա-ադրբեյջանական հակասությունների արդյունքում: Անշուշտ, ներկայում այն չի կարող էական դեր ունենալ, բայց հետագայում, եթե զարգացումները շարունակվեն առկա տրամաբանությամբ, այդ հնարավորությունը կարող է դառնալ Բաքվի նկատմանը առնվազն տեղեկատվական ճնշման լծակ: Իսկ որ զարգացումները կընթանան հենց առկա տրամաբանությամբ, առայժմ ավելի հավանական է, քան հակառակ:

---

1 Ադրբեյջանական կողմը այդ հանքավայրերը անվանում է, համապատասխանաբար, «Քյափազ», «Ազերի» եւ «Չիրաղ», ինչն ավելի շատ է տարածված միջազգային լրատվական դաշտում:

2 Ուշագրավ է, որ դեռ 1995թ. ԼҮԿոյլ-ը Թուրքմենստանի Նավթի ու գազի նախարարության հետ կնքել էր «Քյափազի» շահագործման մասին պայմանագիր, ինչը նշանակում է, որ այն ժամանակ ընկերությունն ընդունում էր, որ հանքավայրը պատկանում է Աշխարհադին:

## ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՑՈՒՄ *Սուրեն Մանուկյան*

Մեպտեմբերի 1-ին Եվրոպան նշեց Երկրորդ աշխարհամարտի մեկնարկի 70-ամյակը: Մարդկության պատմության ամենաառանցքային իրադարձություններից մեկին նվիրված միջոցառման ընթացքը եւս մեկ անգամ ապացուցեց, որ ժամանակակից աշխարհում պատմությունը ոչ միայն անցյալը վերարժեւորելու միջոց է, այլեւ յուրաքանչյուր պետության ինքնության դրսեւորման ու քաղաքական նպատակներին հասնելու շատ արդյունավետ եւ հաճախ օգտագործվող գործիք:

Ընդամենը քսան տարի առաջ դժվար էր պատկերացնել, որ Երկրորդ աշխարհամարտի պատմությունը կարող է լուրջ քաղաքական վեճերի եւ միջազետական լարվածության պատճառ դառնալ:

Կար ընդհանուր գիտակցում, որ այն բարու հաղթանակն է չարի նկատմամբ, եւ այդ հաղթանակը մեծ արյան գնով է տրվել: Իհարկե, տարածայնություններ շեշտադրումների մեջ միշտ էլ եղել են: Այսպես, Արեւմուտքը պատերազմի հանգուցային կետեր էր համարում Փերլ-Ջարրորը, Էլ-Ալամեյնը եւ Նորմանդիայում Երկրորդ ճակատի բացումը, որոնք «ստվերում» էին Մոսկվայի, Ստալինգրադի եւ Կուրսկի ճակատամարտերը: Իսկ ԽՍՀՄ-ում պատերազմը սահմանափակվում էր միայն Հայրենական պատերազմի սահմաններում՝ 1941-1945, իսկ դաշնակիցների մասնակցության մասին աշխատում էին չիշել:

Սակայն ընդհանուր առնամբ կար փոխանածայնություն Երկրորդ աշխարհամարտի հիմնական դիցաբանության վերաբերյալ: Երկրեւես աշխարհի փլուզումից հետո այս ընկալումը նույնական մասնատվեց: Բոլոր պետությունները ծեւակերպեցին Մեծ պատերազմի պատմության սեփական մոդելներ՝ առաջին պլան նշելով նախկինում թաքնված էջերը, համեմելով դրանք տարբեր մեկնաբանություններով:

Երկրորդ աշխարհամարտի գաղափարականացված պատմությունը, թվում էր, ավարտվել է: Սակայն գաղափարականացմանը փոխարինեց քաղաքականացումը:

Այս պայմաններում Երկրորդ աշխարհամարտի մեկնարկի 70-ամյակին նվիրված միջոցառումների ժամանակ հիմնական ուշադրությունը ոչ

թե պատերազմի սարսափների եւ 55 միլիոն զոհերի հիշատակի վրա էր կենտրոնացված, այլ այն հարցադրման, թե ինչ մեղադրանքներ կմերկայացվեն Ռուսաստանին եւ ինչ կպատասխանի Պուտինը:

## Ռուսական նախահարձակում

Մոսկվան բավական լավ էր նախապատրաստվել սպասվող մեղադրանքներին:

Դեռ մինչեւ Գդանսկ կատարելիք այցը ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը «Պատմության էջեր՝ փոխադարձ մեղադրանքների առիթ՝, թե՞ հաշտեցման ու գործընկերության հիմք» վերնագրով հոդված տպագրեց լեհական «Գագետա Վիբորչա» թերթում, որտեղ թեեւ դատապարտեց Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը՝ համարելով այն անընդունելի՝ բարոյական եւ անհեռանկարային՝ գործնական կիրառության տեսակետից, սակայն չանդրադարձավ դրա գաղտնի արձանագրությանը, որով Յիտլերը եւ Ստալինը Եվրոպան փաստացի բաժանում էին իրար մեջ: Ըստ Վ. Պուտինի՝ ԽՍՀՄ-ը կանգնած էր երկու ճակատով պատերազմելու վտանգի առջեւ, եւ երբ հնարավոր դաշնակիցները Արեւմուտքում արդեն գնացել էին նմանատիպ պայմանավորվածությունների, ապա սիսալ կլիներ հրաժարվել չհարձակման մասին պակտից:

Յոդվածում Ռուսաստանի վարչապետը կոչ արեց չհամարել վերոնշյալ պակտը Երկրորդ աշխարհամարտի միակ ձգանը, այլ հիշեցրեց, որ նույն դերը կատարեց նաեւ Մյունխենյան համաձայնագիրը, որից հետո Յիտլերը համոզվեց, որ ամեն ինչ թույլատրելի է, եւ Ֆրանսիան ու Անգլիան մատուցնելու խիստ որոշումը կատարվեց առաջամատների մասնակցությամբ: Պուտինը հիշեցրեց, որ նույն համաձայնագրով Լեհաստանն ինքը մասնակցեց Եվրոպայի բաժանմանը՝ ստանալով չեխական Տեշինյան Սիլեզիան:

Յոդվածում նաեւ խիստ քննադատության են ենթարկվում «սառը պատերազմի հակամարտային ժառանգության մնացուկները», ինչպես նաեւ «այսօրվա քաղաքական կոնյունկտուրայի նպատակներին համապատասխան պատմության վերաշարադրման փորձերը»: Յոդվածը նաեւ պարունակում էր ռուս-լեհական բարեկամության եւ ապագայում այս հարաբերությունների դրական զարգացման վերաբերյալ առատ ծեւակերպումներ:

Երկրի ներսում, սակայն, ռիդորոշումն ավելի անզիջում էր:

Պատերազմի տարելիցն առիթ դարձավ Ռուսաստանում մի շարք վաերագրական ֆիլմերի նկարահանման եւ եթեր հեռարձակման համար:

Դրանք, առանց բացառության, արդարացնում էին Ստալինի գործողությունները մինչեւ պատերազմ եւ մեղադրում Արեւմուտքին, այդ թվում նաեւ Լեհաստանին՝ Խորհրդային Միության դեմ Յիտլերի հետ պայմանավորվածություններ ունենալու մեջ:

Դունիսին ՈԴ Պաշտպանության նախարարության կայքում հայտնվեց մի հոդված, որտեղ պատմաբան Սերգեյ Կովայովը, փաստորեն, մեղադրում էր Լեհաստանին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը սանձագերծելու մեջ, քանի որ այն իրաժարվեց «բավարարել գերմանական բավական չափավոր պահանջները»: Շուտով ՊՆ-ն հայտարարեց, որ դա նախարարության պաշտոնական դիրքորոշումը չէ, եւ այն միայն տրամադրել է հարթակ բանավեճի համար, սակայն միայն այս նյութի տեղադրման փաստն ինքնին խոսում է:

Օգոստոսի 19-ին Արտաքին հետախուզության ծառայությունը հանրությանը ներկայացրեց «Սերձբալթիկա եւ աշխարհաքաղաքականություն. 1935-1945» գիրքը: Փաստաթղթերի այս ժողովածուն լույս էր տեսել երեք տարի առաջ՝ ներքին օգտագործման համար, սակայն այժմ որոշվեց այն լայն շրջանառության մեջ դնել՝ Գերմանիայի հետ չհարձակման մասին պակտը իրեն ԽՍՀՄ ինքնապաշտպանական քայլ հիմնավորելու համար:

Սեպտեմբերի 1-ին իրատարակվեց նաեւ «Լեհական քաղաքականության գաղտնիքները» ժողովածուն, որում Արտաքին հետախուզության ծառայության գաղտնազերծված փաստաթղթերից հստակ երեւում է, որ Լեհաստանը ոչ միայն պայմանավորվածություն ուներ Յիտլերի հետ, այլեւ նույնիսկ խրախուսում էր ԽՍՀՄ-ում անջատողական շարժումները եւ փորձում մասնատել Երկիրը: Այս փաստաթղթերի վրա էր հիմնված նաեւ օգոստոսի 31-ին ցուցադրված «Կարո՞ղ էր արդյոք Ստալինը կանգնեցնել Յիտլերին» վավերագրական ֆիլմը:

Այս նախապատրաստությունից հետո Վ.Պուտինը արդեն Լեհաստանում ասուլիսի ժամանակ ուղղակի կրկնեց Ռուսաստանի հիմնական դիրքորոշումը: Ցուրաքանչյուր կողմի սեփական սխալների ընդունման անհրաժեշտության վերաբերյալ Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկի պնդմանն ի պատասխան՝ Վ.Պուտինն առաջարկեց հիշել Զեխոսլովակիայի բաժանման մեջ լեհերի մասնակցության մասին:

Ասուլիսի ժամանակ նաեւ պարզ դարձավ, որ Ռուս-լեհական հարաբերությունների պատմության դժվար հարցերի պարզաբանման խմբի աշխատանքը նույնպես էական արդյունքներ չի տվել: Յանձնաժողովը խորհուրդ էր տվել ՈԴ կառավարությանը՝ բացել Կատինին վերաբերող ռուսական արխիվները, պաշտոնական հարաբերություններում այս

հարցը Լեհաստանի օրակարգից համելու փոխարեն: Սակայն Պուտինը համաձայնեց արխիվները բացել միայն հակառակ կողմի նույնանձանքայլի դեպքում:

## Ընտրովի հիշողություն

Դիմնական միջոցառումները տեղի ունեցան լեհական Գդանսկի հրվանդանի մոտ գտնվող Վեստերվալտի թերակղզու պաշտպանության հերոսներին նվիրված հուշամալիրում: Այստեղ 70 տարի առաջ գերմանական «Շլեզվիգ-Դուչտայն» ռազմանավի առաջին զարկերն ազդարարել էին վերմախտի մուտքը Լեհաստան եւ պատերազմի սկիզբը:

Մոտ երկու տասնյակ առաջնորդներ էին ժամանել Գդանսկ միջոցառմանը մասնակցելու համար: Դանդիպումն, իրոք, պատմական էր, ինչպես եւ այն իրադարձությունը, որին այն նվիրված էր: Ելույթ ունեցողները բարձրաձայնեցին այն ամենն, ինչ ուզում էին:

Միջոցառման ժամանակ հնչեցրած ճառում Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկին «թիկունքին հասցված դանակի հարված» անվանեց խորհրդային Կարմիր բանակի մուտքը լեհական տարածք 1939թ., իսկ Կատինի տակ գերի ընկած լեհական սպաների գնդակահարումը՝ վրեժ 1920թ. համար, երբ տասնյակ հազարավոր կարմիրանակայիններ զոհվեցին լեհական գերության մեջ: L.Կաչինսկու կարծիքով, հիմնական դասը, որ Եվրոպան պետք է քաղի երկրորդ աշխարհամարտից, «կայսերական նկրտումներից կատարյալ հրաժարումն է»: Ըստ նրա, սոստալիտարիզմի եռթյունը հենց ուրիշների տարածքների նկատմամբ ունեցած հավակնություններն են, եւ նման նկրտումներ հնարավոր էր տեսնել նաև «անցած տարի»: Թեեւ մանրամասներ չհետեւեցին, սակայն ակնարկը հստակ էր:

Սակայն Կաչինսկու ելույթում չկար ոչ մի խոսք Լեհաստանը նացիստներից ազատագրելու ժամանակ խորհրդային զոհերի մասին եւ ոչ մի վատ խոսք հենց նացիստների մասին: Ամբողջ ելույթը, թվում էր, ուղղված է մեկ երկրի՝ Ռուսաստանի եւ մեկ մարդու՝ Պուտինի դեմ:

Լեհաստանի վարչապետ Դ.Տուսկը ավելի մեղմ արտահայտվեց՝ ընդգծելով, որ Լեհաստանը չի ցանկանում օգտագործել սգո արարողությունները այլ պետությունների դեմ, սակայն անթույլատրելի է համարում պատմության մոռացությունը եւ կեղծարարությունը: Ինչպես նաև ընդգծեց, որ թեեւ խորհրդային զինվորներն ազատագրեցին Լեհաստանը ֆաշիզմից, «նրանք չկարողացան այն ազատ դարձնել, քանի որ իրենք ազատ չեն»:

Իր ճառում Վ.Պուտինը հիշեցրեց, որ Գդանսկի պատագրման համար իրենց կյանքն են տվել 53 հազար խորհրդային զինվորներ, իսկ ամբողջ պատերազմի 60 միլիոն զոհերի կեսը ԽՄՌՄ քաղաքացիներ էին: «Մեր երկիրն ընդունել է իր սխալները, Ռուսաստանի Պետական դուման դատապարտել է Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը: Մենք իրավունք ունենք ակնկալելու, որ մյուս երկրները նույնպես կընդունեն իրենց սխալները քաղաքական որոշումների մակարդակով»:

Անսպասելի շեշտադրումներ կային նաեւ Անգելա Մերկելի ելույթում: Գերմանիայի կանցլերը ոչ միայն հերթական անգամ ընդունեց սեփական երկորի մեղքը, այլ նաեւ առաջին անգամ նման բարձր ներկայացուցչություն ունեցող միջոցառման ժամանակ հիշատակեց պատերազմից հետո իրենց տներից վտարված 12 միլիոն գերմանացիների մասին՝ դա անվանելով «քացահայտ անարդարություն» եւ հորդորելով իրերն իրենց անուններով կոչել: Իսկ սա ուղղակի կշտամբանք էր Լեհաստանի հասցեին, քանի որ այդ տեղահանությունը կատարվել էր հենց այսօրվա Լեհաստանի տարածքից:

Մերկելը, միաժամանակ խուսափեց հստակ մատնանշել, թե ով է այս պատերազմի սանձազերծման հիմնական մեղավորը:

### **Կողմնակի հետեւանքներ**

Հետաքրքիր է, որ «պատմության համար պատերազմներն» իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաեւ տնտեսության մեջ: Նախատեսվում էր, որ ստորագրվելու է Լեհաստան ռուսական գազի ներմուծման ծավալի ավելացման մասին համաձայնություն, սակայն դա տեղի չունեցավ: Իսկ, օրինակ, Ուկրաինայի վարչապետ Յուլյա Տիմոշենկոն (որն, անկասկած, շատ բան կունենար ասելու), խուսափելով իր ճառում սուր անկյուններից եւ ընդամենը ակնարկելով, որ Եվրոպայի ազատագրումը 1939-ից սկսված ստրկությունից ավարտվեց ընդամենը քսան տարի առաջ, ստացավ Վ.Պուտինի բարյացակամ վերաբերմունքը եւ որպես հետեւանք՝ ազատվեց ռուս-ուկրաինական գազային պայմանագրում ամրագրված տուգանքներից: Օրինակն ավելի քան խոսուն է:

Այս ֆոնին երկրորդ պլան մղվեց այն, որ ԱՄՆ-ը միջոցառմանը ներկայացված էր շատ ցածր մակարդակով: Երկար ընտրություն կատարելով փոխնախագահ Զ.Քայլենի եւ պետքարտուղար Յ.Քլինթոնի միջև՝ Վաշինգտոնը կանգ առավ նախկին պաշտպանության նախարար՝ 81-ամյա Ուիլյամ Փերիի վրա: Միայն Վարչապայի ճնշման տակ, Վերջին պահին ներկայացուցչությունը բարձրացվեց մինչեւ նախագահի ազգային

անվտանգության գծով օգնական Ձերմս Զոնսը: Լեհական մամուլն անվանեց այդ օրը ամերիկա-լեհական բարեկամության ավարտի օր:

Այս արտահայտությունը հետաքրքիր է հուլիսի 16-ին հրապարակված 20 արեւելաեվրոպական նախկին առաջնորդների, այդ թվում նաեւ նախագահների նամակի համատեքստում: Նամակի հեղինակները ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային մեղադրում էին նախորդ Վարչակարգերի օրոք Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հետ ԱՄՆ հաստատած սերտ հարաբերություններից հեռանալու մեջ: Նրանց կարծիքով, ամերիկյան դիրքերը տարածաշրջանում թուլանում են «Ռուսաստանի ավելի ազրեսիվ ռեւիզիոնիստական քաղաքականության» ֆոնին: Նախկին պաշտոնյաները Օբամային կոչ արեցին «ավելի խիստ քաղաքականություն վարել Ռուսաստանի նկատմամբ» եւ ընդգծել Եվրոպայում ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման կարեւորությունը: Քետագայում պարզվեց, որ նամակը կարող էր պատրաստված լինել «Գերմանիա-ԱՄՆ» Մարշալի հիմնադրամի կողմից, որն ավանդաբար ավելի մոտ է կանգնած ԱՄՆ պահպանողականներին, իսկ արեւելաեվրոպական քաղաքական գործիչներն ընդամենը իրենց ստորագրություններով վավերացրել են այն:

\* \* \*

Նյուրնբերգյան դատավարությունը, թվում է, տվել է երկրորդ աշխարհամարտի բոլոր հարցերի պատասխանները, սակայն իրականում սպիտակ էջերը նույնիսկ այսօր բավական շատ են:

Կատարվածը եւս մեկ անգամ ցույց տվեց, թե որքան կարեւոր են պատմական խորհրդանիշները եւ ինչ մեծ տեղ ունի պատմությունը պետությունների քաղաքականության մեջ: Լեհաստանը չկարողացավ լուծել մարդկության պատմության ամենաարյունալի եւ ողբերգական պատերազմի գնահատմանը եւ արժեւորմանը համապատասխան միջոցառում կազմակերպելու խնդիրը: Երկրորդ աշխարհամարտի գորերի հիշատակման միջոցառումը վերածվեց պատմական իրողության նկատմամբ տարբեր հայեցակարգերի կողմնակիցների բանավեճի: Խախտվեց նույնիսկ նման միջոցառումների արարողակարգը: Դեմ առ դեմ հանդիպումները շատ կարծ տեւեցին, իսկ ընդլայնված կազմով հանդիպում, որը ցանկացած նման բարձր կարգի միջոցառման անհրաժեշտ բաղկացուցիչներից է, տեղի չունեցավ:

## **ՈՌԻՍԱՍՏԱՆ – ԱՄՆ. ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԻԱՄԻՆ Պողոսյան**

2003թ. սկսված ռուս-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատքարացումն իր գագաթնակետին հասավ 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմից հետո, երբ երկու երկրների քաղաքական եւ փորձագիտական շրջանակները բացահայտորեն սկսեցին խոսել նոր «սառը պատերազմի» մասին։ Ռուս-ամերիկյան հարաբերությունների ապագան կարեւոր տեղ էր գրադեցնում 2008թ. ԱՄՆ նախագահական ընտրապայքարի ժամանակ, ընդ որում, եթե հանրապետական թեկնածու Զոն Մաքքեյնը հանդես էր գալիս բավականաչափ կոշտ դիրքերից (օգոստոսյան պատերազմի օրերին նա անգամ հայտարարեց. «Մենք բոլորս վրացիներ ենք»), ապա դեմոկրատական թեկնածու Բարաք Օբաման ավելի չափավոր դիրքորոշման կողմնակից էր։ Պատահական չէ, որ Օբամայի հաղթանակից հետո բազմաթիվ վերլուծաբաններ եւ փորձագետներ ռուս-ամերիկյան հարաբերություններում դրական զարգացումներ էին ակնկալում։ Ամերիկյան վարչակազմի առաջին քայլերը կարծես թե վկայում էին նման ենթադրությունների ծշմարտացիության մասին։ 2009թ. մարտի 6-ին Ժնևում կայացած Քլինթոն–Լավրով հանդիպման ժամանակ ԱՄՆ պետքարտուղարը Ռուսաստանի արտգործնախարարին հանձնեց «Վերագրոժարկման» սիմվոլիկ կոճակը՝ ցանկանալով ընդգծել երկկողմնականության հարաբերությունները բարելավելու ամերիկյան կողմից ցանկությունը։ Ենթադրվում էր, որ «Վերագրոժարկման» հաջորդ հանգրվանը լինելու է Լոնդոնը, որտեղ 2009թ. ապրիլի 1-ին համաշխարհային ֆինանսական ճգնաժամին նվիրված միջազգային գագաթաժողովի շրջանակներում նախատեսված էր Օբամա – Մերվեդե առաջին հանդիպումը։

Նախքան լոնդոնյան հանդիպումը վերլուծական հանրույթն ակտիվորեն քննարկում էր ռուս-ամերիկյան «մեծ առեւտրի» հնարավորությունը, որի շրջանակներում ԱՄՆ-ը իրաժարվում էր Արևելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայումից, իսկ Ռուսաստանը համաձայնվում էր իրանի դեմ ավելի խիստ պատժամիջոցների կիրառմանը այն դեպքում, եթե պաշտոնական թերախանը մերժեր ուղղակի երկխոսություն սկսելու Օբամայի առաջարկը։ Սակայն մարտի 29-ին բրիտանական BBC հեռուստաընկերությանը տված հար-

ցազրույցում ամերիկանալով ռուս-ամերիկյան հարաբերությունների հնարավոր զարգացումներին՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեվ հստակ նշեց հակահրթիռային համակարգի եւ իրանի միջուկային ծրագրի միջեւ զուգահեռներ անցկացնելու փորձերի անթույլատրելիության մասին՝ հայտարարելով, որ երկկողմ հարաբերություններում առեւտրի մասին պարզունակ պատկերացումները տեղին չեն:

Ակնհայտ է, որ երկու պետությունները տարբեր ընկալումներ ունեն հարաբերությունների բարելավմանն ուղղված իրական քայլերի եւ հնարավոր արդյունքների վերաբերյալ:

Դեռևս 2008թ. օգոստոսի 31-ին ռուսական երեք հիմնական հեռուստաալիքներին տված հարցազրույցում խոսելով Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթների մասին՝ Դմիտրի Մեդվեդեվը դրանց թվում նշել էր միաբեւեա աշխարհի ծեւավորման անթույլատրելիության եւ Ռուսաստանի՝ որոշակի տարածաշրջաններում ունեցած արտոնյալ շահերի մասին: Դրանով Մեդվեդեւն իր համաձայնությունն էր հայտնում դեռևս 2007թ. փետրվարին Մյունիսեմում կայացած անվտանգության հարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովում այդ ժամանակ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից հնչեցված տեսակետներին: Օբամայի հետ հանդիպումից մեկ օր առաջ՝ 2009թ. մարտի 31-ին, «Վաշինգտոն փոստ» պարբերականում հրապարակված հոդվածում խոսելով ռուս-ամերիկյան հարաբերությունների մասին՝ Մեդվեդեվը կողմ էր արտահայտվում դրանց բարելավմանը՝ միաժամանակ վատրարացման հիմնական պատճառ համարելով Զորջ Բուշի վարչակազմի Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային համակարգի տեղակայման եւ ՆԱՏՕ-ի՝ դեպի արեւելք ընդարձակման ծրագրերը: Ռուսաստանի համար հարաբերությունների «վերագործարկումն» առաջին հերթին նշանակում էր ամերիկյան կողմից հրաժարում վերոհիշյալ երկու նպատակներից, ինչպես նաև հետխորհրդային տարածքի ճանաչում որպես Ռուսաստանի հատուկ շահերի գոտի եւ հրաժարում այդ տարածաշրջանում ամերիկյան ակտիվ քաղաքականության իրականացումից:

Սակայն ամերիկյան կողմը բոլորովին համաձայն չէր «վերագործարկման» նման ծեւակերպումների եւ արդյունքների հետ: Վաշինգտոնի համար առաջնահերթ կարեւորության խնդիրներն էին զանգվածային ոչնչացման գենքի տարածման կանխումը, ահարեւէզության դեմ պայքարը, իրանի դեմ հնարավոր նոր պատժամիջոցների կիրառման դեպքում Ռուսաստանի աջակցության ապահովումը, Ռուսաստանի հետ միջուկային գենքի կրծատման նոր համաձայնագրի ստորագրումը: Կողմերի այս տարակարծություններն ընդգծվեցին լոնդոնյան հանդիպման

ժամանակ: Օբաման հստակ հայտարարեց, որ ամերիկյան կողմի համար անընդունելի է 21-րդ դարում «ազդեցության գոտիների» հայեցակարգով առաջ շարժվելը՝ ակնարկելով, որ ԱՄՆ-ը մտադիր չէ համակերպել որոշակի տարածաշրջաններում Ռուսաստանի՝ արտօնյալ շահեր ունենալու հավակնությունների հետ: Հանդիպման ընթացքում միակ շոշափելի ձեռքբերումը ռազմավարական հարձակողական գենքերի կրծատման եւ սահմանափակման նոր պայմանագրի կնքման շուրջ բանակցությունների մեկնարկի պայմանավորվածությունն էր (գործող պայմանագիրն ուժի մեջ է մինչեւ 2009թ. դեկտեմբեր): Օբամա-Մեդվեդեվ հանդիպման արդյունքում ստորագրված համատեղ հոչակագրում կողմերն ընդունում էին Արեւելյան Եվրոպայում հակարտիության պաշտպանության համակարգի տեղակայման եւ 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմի պատճառների եւ հետեւանքների վերացման շուրջ տարածայնությունների առկայությունը: ԱՄՆ նախագահը Արեւելյան Եվրոպայում հակարտիության համակարգի տեղակայման խնդիրն անդրադարձավ նաև ապրիլի 5-ին Պրահայում ունեցած Ելույթի ժամանակ՝ նշելով, որ Իրանի միջուկային ծրագիրն իրական սպառնալիք է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև Իրանի հարեւանների ու ԱՄՆ-ի դաշնակիցների համար, եւ քանի դեռ այդ վտանգն առկա է, ԱՄՆ-ը կշարունակի Եվրոպայում հակարտիության պաշտպանության համակարգի ստեղծմանն ուղղված աշխատանքները: Հակարտիության պաշտպանության խնդիրն ուղղակիորեն կապելով Իրանի միջուկային ծրագրի հետ՝ Օբաման հակադարձում էր մարտի 29-ի հարցազրույցում Մեդվեդեվի բերած փաստարկներին:

Հարաբերությունների «վերագրործարկման» մասին բարձրագույն հայտարարություններին գուգահեռ թե՛ Ռուսաստանը եւ թե՛ ԱՄՆ-ը շարունակելու են բացառապես սեփական շահերից բխող քաղաքականության իրականացումը՝ համագործակցելով միայն այն ոլորտներում, որտեղ առկա են փոխադարձ շահեր: Այս մոտեցումն իր տրամաբանական շարունակությունը գտավ 2009թ. հուլիսի 6-ին Մոսկվայում կայացած Օբամա-Մեդվեդեվ հանդիպման ընթացքում, որի ժամանակ ձեռք բերվեցին պայմանավորվածություններ միայն ռազմավարական հարձակողական գենքերի կրծատման եւ սահմանափակման մասին նոր պայմանագրի կնքման եւ Ռուսաստանի տարածքով Աֆղանստանում ԱՄՆ դեկավարությամբ գործող ուժերի համար ռազմական բեռների տարանցիկ փոխադրումների խնդրում:

Երկկողմ հարաբերություններում շարունակվող լարվածության վերջին դրսեւորումներից մեկը Ռուսահնայի շուրջ տեղի ունեցող զար-

գացումներն են: Մոսկվայում կայացած Օբամա-Մեդվեդեև հանդիպումից ընդամենը երկու շաբաթ անց ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենն այցելեց Ուկրաինա: Նախագահ Յուշչենկոյի հետ հանդիպումից հետո Բայդենը հայտարարեց Օբամայի վարչակազմի՝ «նարնջագույն հեղափոխության» հանդեպ տածած հիացմունքի մասին՝ շեշտելով ուժեղ եւ ժողովրդավարական Ուկրաինային աջակցելու պատրաստակամությունը: Իր հայտարարության մեջ Բայդենը եւս մեկ անգամ նշեց, որ ԱՄՆ-ը չի ընդունում «ազդեցության գոտիների» հայեցակարգը եւ աջակցում է Ուկրաինայի՝ եվրաատլանտյան համակարգին ինտեգրվելու ձգտումները՝ պաշտպանելով Ուկրաինայի ինքնիշխանությունը, անկախությունն ու ազատությունը: Ռուս-ամերիկյան հարաբերությունների տեսանկյունից առավել կարեւոր էր Բայդենի հայտարարության այն հատվածը, որտեղ, խոսելով ռուս-ամերիկյան հարաբերությունների «վերագործարկման» մասին, ԱՄՆ փոխնախագահը նշում էր, որ դա չի կատարվելու ի հաշիվ Ուկրաինայի: Այնիայտ է, որ հայտարարությունների նման ոճը չէր կարող չառաջացնել պաշտոնական Մոսկվայի դժգոհությունը, որի հարաբերությունները կիեւի հետ էլ ավելի էին սրվել 2009թ. գագային պատերազմից հետո:

ԱՄՆ նոր վարչակազմի՝ Ռուսաստանի հանդեպ ունեցած վերաբերմունքի վառ արտահայտություններից մեկը 2009թ. հուլիսի 25-ին «Ռուս Սթրիթ Զորնլ» պարբերականին Ջոզեֆ Բայդենի տված հարցազրույցն էր, որտեղ վերջինս անդրադարձ էր կատարել նաեւ ռուս-ամերիկյան հարաբերություններին: Այստեղ Բայդենը նշում է, որ Ռուսաստանի թուլացող տնտեսությունը եւ ժողովրդագրական խնդիրները կիարկադրեն այդ երկրին հրաժարվել նախաձեռնողական արտաքին քաղաքականությունից, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետությունները սեփական ազդեցության գոտի տեսնելու ցանկությունից: Բայդենն ավելացնում էր, որ Ռուսաստանի դեկավարներն իրենք են հասկանում միջազգային ասպարեզում Ռուսաստանի դերի աստիճանական թուլացման անխուսափելիությունը եւ աստիճանաբար համակերպում են այդ գաղափարի հետ: Օբամայի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյայի այս հարցազրույցն իր ոճով ավելի շատ նմանվում էր 1990-ական թվականների սկզբին Ռուսաստանի մասին հնչող գնահատականներին եւ ոչ մի կերպ չէր տեղափորվում իրավահավասարության եւ փոխադարձ շահերի հարգման վրա հիմնված նոր հարաբերությունների ձեւավորման մասին ամերիկյան կողմի հնչեցրած հայտարարություններում:

Այս հարցազրույցից ընդամենը օրեր անց՝ 2009թ. օգոստոսի 11-ին, հրապարակվեց Դմիտրի Մեդվեդեևի բաց նամակը Ուկրաինայի նախա-

գահ Վիկտոր Յուշենկոյին, որտեղ Ռուսաստանի նախագահը վերջինիս մեղադրում էր բացահայտ հակառական քաղաքականություն իրականացնելու մեջ՝ հիշատակելով ՆԱՏՕ-ին անդամակցելու պաշտոնական կիեւի դիրքորոշումը, 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմի ընթացքում Յուշենկոյի որդեգրած բացահայտ վրացամետ կեցվածքն ու Ռուսականայի կողմից Վրաստանին գենքի մատակարարումը: Ռուսաստանի նախագահը պաշտոնապես հայտարարեց կիեւ ռուսական նոր դեսպանի ժամանումը հետաձգելու որոշման մասին՝ նշելով, որ կոնկրետ ժամկետներ կսահմանվեն՝ ելնելով ռուս-ռուսական հարաբերությունների հետագա ընթացքից: Վերլուծաբանների եւ փորձագետների կողմից «Մյունիսենյան ճառ ԱՊՃ-ի համար» բնորոշումն ստացած այս դեմարշը Ռուսականայում սեփական ազդեցությունը վերականգնելու Ռուսաստանի հստակ ցանկության արտահայտությունն է, ինչն ուղղակի հակասության մեջ է մտնում Օբամայի վարչակազմի՝ «ազդեցության գոտիները» մերժելու դիրքորոշման հետ: Ակնհայտ է, որ 2010թ. հունվարին Ռուսականայում սպասվող նախագահական ընտրությունների նոտենալուն զուգընթաց ռուս-ամերիկյան մրցակցությունը գնալով ուժեղանալու է՝ ըստ էության չտարբերվելով 2004թ. նախագահական ընտրությունների ժամանակ երկու երկրների միջեւ արձանագրված կոչտառակատումից:

ԱՄՆ-Ռուսաստան եւ ավելի ընդհանուր ձեւաչափով Արեւմուտք-Ռուսաստան շարունակվող մրցակցության օրինակ է Մոլդովայում իրականացված իշխանափոխությունը: 2009թ. ապրիլի 5-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխող կոմունիստական կուսակցությունը չկարողացավ ձեռք բերել երկրի նախագահի ընտրության համար անհրաժեշտ թվով մանդատներ: Ընտրությունների արդյունքներին հաջորդեցին ընդդիմության կազմակերպած բողոքի զանգվածային գործողությունները: Նախագահի ընտրության երկու անհաջող փորձերից հետո սահմանադրության համաձայն նշանակվեցին խորհրդարանական արտահերթ ընտրություններ: Յուլիսի 29-ին կայացած ընտրությունների արդյունքով կոմունիստական կուսակցությունն ստացավ ձայների ընդամենը 45 տոկոսը՝ 101 տեղանոց խորհրդարանում ապահովելով 48 մանդատ: Ընդդիմադիր չորս կուսակցությունները միասին ստացան 53 մանդատ: Օգոստոսի 28-ին Մոլդովայի խորհրդարանի նախագահ ընտրվեց ռումինամետ Լիբերալ կուսակցության նախագահ Միխայիլ Գիմպան: Սեպտեմբերի 2-ին Մոլդովայի կոմկուսի առաջնորդ Վլադիմիր Վորոնինը հայտարարեց Մոլդովայի նախագահի պաշտոնից իր հրաժարականի մասին: Սեպ-

տեմբերի 8-ին Մոլդովայի սահմանադրական դատարանը մերժեց կոմունիստական կուսակցության հայցը, որը պահանջում էր անօրինական ճանաչել խորհրդարանի նախագահի պաշտոնում Գիմպայի ընտրությունը: Սահմանադրական դատարանի այս որոշումից հետո Գիմպան կստանձնի նաեւ նախագահի պաշտոնակատարի պարտականությունները:

Ուսւամերիկյան հարաբերությունների համատեքստում պետք է դիտարկել նաեւ Բուլղարիայի ներքաղաքական կյանքում կատարված կտրուկ փոփոխությունները: 2009թ. հուլիսի 5-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Դաշինք հանուն Բուլղարիայի» ձախակողմյան կոալիցիան Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության առաջնորդությամբ ծանր պարտություն կրեց: Սոցիալիստական կուսակցության նախագահ, Բուլղարիայի վարչապետ Սերգեյ Ստանիշեւը հանդես էր գալիս Ուսւաստանի հետ համատեղ էներգետիկ խոշոր ծրագրերի, առաջին հերթին «Հարավային հոսք» գազամուղի իրականացման օգտին:

Ընտրություններում հաղթանակ տոնած «Քաղաքացիները հանուն Բուլղարիայի եվրոպական զարգացման» կուսակցության նախագահ Բոյկո Բորիսովը, որն ընտրությունների արդյունքով գրադերեց Բուլղարիայի վարչապետի պաշտոնը, դեմ էր արտահայտվում Ուսւաստանի հետ էներգետիկ համագործակցությանը: Դեռ մինչեւ վարչապետի պարտականությունների ստանձնումը Բորիսովը հուլիսի 10-ին տնտեսության եւ էներգետիկայի գործող նախարար Պյոտր Դիմիտրովին ուղղված նամակով պահանջում էր դադարեցնել Ուսւաստանի հետ համատեղ էներգետիկ ծրագրերի շուրջ տարվող բանակցությունները:

Բուլղարիան կարեւոր դերակատարում ունի «Հարավային հոսք» գազամուղի կառուցման գործընթացում, եւ նրա մասնակցության դադարեցումը լրջորեն վտանգում է այդ ծրագրի իրականացումը: «Հարավային հոսքը» Ուսւաստանի առավել հավակնութ գազային ծրագրերից մեկն է, որի նպատակն է էլ ավելի ամրապնդել Եվրամիության էներգետիկ շուկայում Ուսւաստանի ազդեցությունը: Այս ծրագիրը Եվրամիության եւ ԱՄՆ աջակցությունը վայելող «Նախարարություն» գազամուղի հիմնական մրցակիցն է: Վերջինս նախատեսում է Ուսւաստանը շրջանցելով Եվրոպա հասցնել կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսները: Սեպտեմբերի 1-ին Բուլղարիայի նորընտիր վարչապետ Բոյկո Բորիսովի հետ հանդիպման ընթացքում Ուսւաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը կոչ արեց վերջինիս հնարավորինս շուտ կողմնորոշվել համատեղ էներգետիկ ծրագրերի հանդեպ վերաբերմուն-

քում՝ նշելով, որ որեւէ ծրագրից Բուլղարիայի հրաժարման դեպքում Ռուսաստանն այլ միջոցներ կգտնի դրանք կյանքի կոչելու համար:

Ակնհայտ է, որ հարաբերությունների «վերագործարկումը» վերջ չի դնի ռուս-ամերիկյան մրցակցությանը Արեւելյան Եվրոպայում եւ հետխորհրդային տարածաշրջանում: Կարճաժամկետ հեռանկարում երկու պետությունները կհամագործակցեն այն ոլորտներում, որտեղ առկա է շահերի համընկնում՝ միջուկային գենքի կրծատման մասին նոր պայմանագիր, Աֆղանստանում իսլամական ծայրահեղականների դեմ պայքար եւ այլն: Միաժամանակ կպահպանվեն տարածայնություններն Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման, Իրանի միջուկային խնդրի, ՆԱՏՕ-ի՝ դեպի արեւելք հետագա ընդարձակման, Էներգետիկ ռեսուրսների արտահանման ուղիների եւ դրանց նկատմամբ վերահսկողության խնդիրներում:

## ՆԱՏՕ-Ն ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ Զրիգնել Քժեզինսկի

Իր գոյության 60 տարիներին Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը միջազգային գործերում հասել է երեք պատմական նշանակություն ունեցող հաջողության: Առաջին ՆԱՏՕ-ն վերջ տվեց Արեւմուտքի Երկրների միջեւ անդրատլանտյան ու Եվրոպական գերիշխանության համար դարավոր «քաղաքացիական պատերազմին»: Երկրորդ Միացյալ Նահանգները Երկրորդ աշխարհամարտից հետո իր վրա վերցրեց Եվրոպան խորհրդային տիրապետությունից պաշտպանելու պարտականությունը: Եվ երրորդ դաշինքը հասավ «սառը պատերազմի» խաղաղ ավարտին, ինչը նախադրյալներ ստեղծեց ժողովրդավարական Եվրոպական միության ընդարձակման համար:

Սակայն այս նվաճումներն, այնուամենայնիվ, առաջացնում են միանգամայն օրինական հարց. իսկ այսուհետեւ ի՞նչ:

Այսօր ՆԱՏՕ-ն բախվում է համաշխարհային անվտանգությանը սպառնացող վտանգների: Մեր ժամանակի պարադոքսն այն է, որ աշխարհը, դառնալով էլ ավելի փոխկապակցված ու փոխկախյալ, ապրում է մշտապես սաստկացող ժողովրդական խռովություններ եւ հուզումներ: Սակայն քասի աճող սպառնալիքի դեմ պայքարի համար գոյություն չունի գլոբալ անվտանգության ապահովման արդյունավետ մեխանիզմ:

Բացի այդ, իրավիճակը բարդացնում է այն, որ Չինաստանի եւ Շնդկաստանի դրամատիկ վերելքը, ինչպես նաև ճապոնիայի արագ վերականգնումը ահազանգում են քաղաքական ու տնտեսական ծանրության գլոբալ կենտրոնի տեղաշարժման մասին՝ Հյուս. Ատլանտիկայից այն կողմ, Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ուղղությամբ:

Գլոբալ ուժի փոշիացման ու զանգվածների հուզումների սաստկացման համակցումը ստեղծում է պայթյունավտանգ խառնուրդ: Այդպիսի վտանգավոր պայմաններում ՆԱՏՕ-ի անդամների համար առաջնային խնդիր պիտի լինի Աֆղանստանում իրենց ռազմական կամպանիայի քաղաքականապես ընդունելի նպատակի ձեւակերպումը եւ իրագործումը: Այս խնդիրն իրականում անհրաժեշտ է լուծել ռազմական ու տնտեսական համատեղ ջանքերով՝ ռազմական մասնակցության վերաբերյալ առանց որեւէ պատճառաբանության եւ Աֆղանստանին ու Պակիստանին ցուցա-

բերվող ֆինանսական օգնության հարցում առանց խուսանավման: Նման վճռականությունը ՆԱՏՕ-ի առաջին կամպանիայում, համաձայն նրա կանոնադրության 5-րդ հոդվածի դրույթների, անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի դաշինքի հեղինակությունը:

Սակայն իրավիճակն այնպիսին է, որ 5-րդ հոդվածի դրույթները թույլատրում են յուրաքանչյուր երկրի, ի պատասխան դաշինքի ընկերակիցներից որեւէ մեկի վրա հարձակման, ներդնել այնպիսի ավանդ, ինչպիսին ինքն անհրաժեշտ կհամարի (զգալի կամ ոչ այնքան): Բացի այդ, որոշումների կայացման ժամանակ ՆԱՏՕ-ում գոյություն ունի համակարծության (կոնսենսուսի) սկզբունք, իսկ դա մեկ կամ երկու անդամ երկրների, փաստացիորեն, հնարավորություն է տալիս վետո դնել պատասխան գործողությունների վրա: Դաշինքի շարքերի ընդլայնման (մինչեւ 28 անդամ), ինչպես նաև այն պատճառով, որ ՆԱՏՕ-ի որոշ անդամներ կուլ են տալիս օտար պետությունների խայծը, խնդիրն ավելի է սրվում: Ուստի, եթե որոշումը պետք է ընդունվի ճնշող մեծանանությամբ, այլ ոչ թե միաձայն՝ դաշինքի բոլոր անդամների կողմից, հարկ է մտածել, որպեսզի ձեւակերպվի «համակարծության» առավել գործուն սահմանում:

Դաշինքին նաև անհրաժեշտ է Ռուսաստանի Դաշնության հետ փոխարարերություններում իր համար սահմանել աշխարհաքաղաքականորեն իիմնավորված երկարաժամկետ ռազմավարական նպատակ: Ռուսաստանը թշնամի չէ, բայց ՆԱՏՕ-ին նախկինի պես թշնամաբար է նայում: Ուստի ՆԱՏՕ-ի կողմնորոշիչները պետք է սահմանվեն՝ ելնելով երկու ռազմավարական նպատակներից. Եվրոպայի անվտանգության ամրապնդում՝ Ռուսաստանին եվրաատլանտյան ընկերակցության հետ առավել սերտ համագործակցության մեջ ներգրավելու ճանապարհով, ինչպես նաև նրա հետ փոխգործակցում՝ գլոբալ անվտանգության ավելի մասշտաբային ցանցի շրջանակներում, ինչը որոշակիորեն կնպաստի Ռուսաստանի պահպանված կայսերական հավակնությունների մարմանը:

Այդ ուղղությամբ առաջին դրական քայլը կարող է լինել անվտանգության հարցերում համագործակցության մասին համաձայնագիրը ՆԱՏՕ-ի եւ Կրեմլի կողմից ստեղծված Շավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) միջեւ, որի մեջ ընդգրկված են Շայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը եւ Ուզբեկստանը: Ի պատասխան նման զիջման, որին վաղուց արդեն հետամուտ է լինում Մոսկվան, կարելի է առաջադրել նախապայման, որ այդ համաձայնագիրը կգործի միայն ՆԱՏՕ եւ ՀԱՊԿ չմտած պետությունների՝ իրենց ընտրությամբ կամ առաջին, կամ երկրորդ կազմակերպություն մտնելու իրավունքի հաստատման դեպքում:

ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունների բարելավման շնորհիվ դյուրին կլինի համագործակցություն հաստատել հզրացող ասիական տերությունների հետ, որոնց նույնպես հարկավոր է ընդգրկել անվտանգության ոլորտի համատեղ նախաձեռնություններում։ Այսպիսի հետզհետե զարգացող փոխգործակցությունն, իր հերթին, կհաճգեցնի ՆԱՏՕ-ԾՀԿ (Չամհայի համագործակցության կազմակերպություն) համատեղ խորհրդի ստեղծմանը, որի միջոցով հնարավոր կլինի Չինաստանը միջնորդավորված կերպով ներգրավել Յյուսիսատլանտյան դաշինքի հետ համագործակցության մեջ։ Իսկ դա արժանի նպատակ է։ Այնուհետեւ, հաշվի առնելով գլոբալ հարաբերակցությունում ուժերի եւ ազդեցությունների փոփոխությունները, ՆԱՏՕ-ն պետք է հեռանկարում մտածի Արեւելյան Ասիայի մի շարք առաջատար պետությունների՝ հատկապես Չինաստանի ու ճապոնիայի, ինչպես նաև Յնդիաստանի հետ, առավել անմիջական պաշտոնական կապեր հաստատելու ուղղությամբ։

Սակայն, որպեսզի պահպանի իր կարեւորությունն ու ժամանակի պահանջներին համապատասխանությունը, ՆԱՏՕ-ն չպետք է պարզապես ընդարձակվի՝ վերածվելով գլոբալ դաշինքի կամ փոխակերպվելով ժողովրդավարությունների միջազգային միության, ինչը համառորեն պնդում են շատերը։ Մեփական գլոբալացմանը ՆԱՏՕ-ն բովանդակագրկում է ամերիկա-եվրոպական կապերի առաջնայնությունը։ Բացի այդ, հզրացող տերություններից ոչ մեկը չի համաձայնի անդամակցել ՆԱՏՕ-ին, որն ընդլայնվում է գլոբալ ծավալներով։ Եվ վերջապես, հիմնված լինելով գաղափարախոսության վրա՝ ժողովրդավարությունների գլոբալ դաշինքին դժվար կլինի որոշել, թե ում ընդգրկել իր կազմի մեջ, ում՝ ոչ։ Ժողովրդավարությունների նման միավորնանը բարդ կլինի խելամիտ հաշվեկշիռ գտնել իր դոկտրինալ ու ռազմավարական նպատակների միջեւ։

Եվ, այնուամենայնիվ, ՆԱՏՕ-ն ունի բավականաչափ փորձ, մեխանիզմներ եւ միջոցներ, որպեսզի լինի իրական գործողությունների ներուժ ունեցող երկուների՝ անվտանգության հարցերի շուրջ տարբեր նախաձեռնությունների գլոբալ սարդուստայնի էպիկենտրոնը։ Կենսագործելով այսպիսի ռազմավարական առաքելություն՝ ՆԱՏՕ-ն ոչ միայն կպահպանի քաղաքականության մեջ անդրատլանտյան միասնությունը, այն նաև կպատասխանի անվտանգության ոլորտում 21-րդ դարի բոլոր առավել սուր մարտահրավերներին։

«The New York Times»

19.08.2009

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

<b>Գագիկ Տեր-Ճարությունյան</b>	
Աշխարհագույնական Զարգացումների	
ՈՐՈՇ ՍՑԵՆԱՐՆԵՐ	1
<b>Ոռութեն Մելքոնյան</b>	
ՈՒԾԱԳՐԱՎ ՓԱՍՏԵՐ	
ԹՈՒՐՖԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ	
ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐԶ	11
<b>Արաքս Փաշայան</b>	
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱՊՐԵԶԱՆՈՒՄ	16
<b>Արտաշես Տեր-Ճարությունյան</b>	
ԱԴՐԲԵՋԱՆ-ԹՈՒՐՔԵՆՍՏԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՇՈՒՐԶ	21
<b>Սուլեյման Մանուկյան</b>	
ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ.	
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄ	25
<b>Բենիամին Պողոսյան</b>	
ՈՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ.	
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ	31
<b>Զբիգնեւ Բժեզինսկի</b>	
ՆԱՏՕ-Ն ԵՎ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	38

**Շապիկին պատկերված է  
Խողաբույն լիճը**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Դիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: